



British Embassy
Yerevan



Հայաստանի
Հանրապետության
Ազգային ժողով



Մարդկային զարգացման
միջազգային կենտրոն



UKaid
from the British people

Good Governance Fund

Ճրագիրն իրականացվում է Միացյալ Թագավորության «Լավ կառավարման հիմնադրամի» շրջանակում՝ բրիտանացի ժողովրդի տրամադրած աջակցությամբ

Հետօրենսդրական գործընթաց և օրենքների կատարման վերահսկողություն

«ՀՀ Ազգային ժողովի՝ քաղաքական բանավեճեր վարելու և ռազմավարական հաղորդակցություն ապահովելու կարողությունների հզորացում» ծրագիր

“Strengthening the capacity of the National Assembly in strategic political debate and communication” project

www.gov.uk/world/armenia
<https://www.facebook.com/britishembassyerevan/>
<https://twitter.com/UKinArmenia>
www.ichd.org



**Հետօրենսդրական գործընթաց
և օրենքների կատարման
վերահսկողություն**

Սույն ուղեցույցը կազմվել է «ՀՀ Ազգային ժողովի՝ քաղաքական բանավեճեր վարելու և ռազմավարական հաղորդակցություն ապահովելու կարողությունների հզորացում» ծրագրի շրջանակներում: Ծրագիրն իրականացվում է «Մարդկային զարգացման միջազգային կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից, Միացյալ Թագավորության «Լավ կառավարման հիմնադրամի» շրջանակում՝ բրիտանացի ժողովրդի տրամադրած աջակցությամբ:

Սույն ուղեցույցում արտահայտված տեսակետները հեղինակներինն են և պարտադիր չէ, որ համընկնեն Միացյալ Թագավորության կառավարության պաշտոնական դիրքորոշման հետ»:

Սույն ուղեցույցը հասանելի է նաև մեր էլեկտրոնային կայքում՝ www.ichd.org:

Սույն ուղեցույցը հասանելի է նաև խոշորատառ տպագրությամբ՝ ըստ պահանջի: Խնդրում ենք զանգահարել +374 10 582638 հեռախոսահամարով:

© Մարդկային զարգացման միջազգային կենտրոն, 2018

Բովանդակություն

| | |
|--|-----------|
| Համառոտագիր..... | 5 |
| Նախաբան..... | 7 |
| Խորհդարանում ՀՕՎ-ի կազմակերպման մեթոդոլոգիական քայլերը | 13 |
| Նախապատրաստական փուլ..... | 13 |
| Պլանավորման փուլ..... | 20 |
| Իրականացման փուլ..... | 35 |
| Հետագա քայլերի փուլ..... | 54 |
| ԱՄՓՈՓՈՒՄ | 58 |

Ազգային ժողովի հիմնական դերը մարդկանց կարիքներին համապատասխան օրենքների ստեղծումն է: Սակայն, օրենքների ստեղծումը ինքնանպատակ չի կարող լինել. դրանք պետք է նաև լինեն կիրառելի, հետևաբար, խորհրդարանի դերակատարման մեջ է մտնում նաև գնահատել, արդյո՞ք ընդունված օրենքները կիրառելիս օրենքի հիմքում դրված նպատակները դառնում են իրականություն, թե՞ ոչ: Հետօրենսդրական վերահսկողությունն (Այսուհետ՝ ՀՕԿ) այն հնարավոր գործիքներից մեկն է, որը թույլ է տալիս գնահատել օրենքի կիրառման արդյունավետությունը, հասկանալ թե ի՞նչ չափով են ընդունված օրենքների նպատակները հասանելի, որո՞նք են խոչընդոտող հանգամանքները:

ՀՕԿ-ն իրականացվում է հետևյալ փուլերով՝ նախապատրաստական, պլանավորման, իրականացման և հետագա գործողությունների:

Նախապատրաստական փուլ

Մինչ ՀՕԿ-ի պլանավորման փուլին անցնելը՝ Ազգային ժողովի ՀՕԿ-ի համար պատասխանատու կազմակերպությունն (կառուցվածքային ստո-

րաբաժանում, մշտական հանձնաժողով ևն) իրականացնում է ՀՕԿ-ի առանցքային խնդիրների, հնարավոր սահմանափակումների, պարտադիր պահանջների և օգտագործվող ռեսուրսների հստակեցում: Այս հստակեցումները կարևոր են հետօրենսդրական գործընթացների ճիշտ ուսումնասիրություն իրականացնելու համար:

Պլանավորման փուլ

Ելնելով նախապատրաստական փուլի արդյունքներից.

- ընտրվում են ՀՕԿ-ի հետազոտման և մոնիտորինգի ենթակա օրենքների ցանկը,
- որոշակիացվում են ՀՕԿ-ի նպատակներն ու խնդիրները,
- առանձնացվում են ընտրված օրենքների կիրառումն իրականացնող մարմիններն ու համապատասխան շահառուների շրջանակը,
- հավաքվում է անհրաժեշտ տեղեկատվություն և տվյալներ,

- որոշվում է ՀՕՎ-ի իրականացման ժամանակացույցը և գործողությունների պլանը:

Իրականացման փուլ

Օրենքի կիրարկումն ապահովող մարմնի ներկայացուցիչների և շահառուների հետ խորհրդակցությունների արդյունքում պարզվում է.

- օրենքից բխող ենթաօրենսդրական իրավական ակտի ազդեցությունները,
- տեղեկատվական աղբյուրներով տվյալ օրենքի վերաբերյալ համապատասխան իրազեկվածության ապահովումը,
- վերլուծության է ենթարկվում ՀՕՎ-ի աղյուսքում հայտնաբերված

և հավաքագրված տեղեկատվությունը,

- մշակվում է համապատասխան զեկույցի նախագիծ:

Հետագա գործողությունների փուլ

Ձեկույցի հիման վրա արվում է եզրակացություն հետագա գործողությունների համար: Բազմացվում է զեկույցը և դարձվում հանրայնորեն մատչելի, որը հնարավորություն է տալիս շահագրգիռ անձանց և լայն հանրությանը գնահատել ՀՕՎ-ի արդյունքները և իրականացված գործընթացը, ինչպես նաև արդյունքների հիման վրա իրականացնել օրենքի կիրառման արդյունավետությունը բարձրացնելուն միտված անհրաժեշտ գործողություններ:

Այս ուղեցույցը նպատակ ունի օգնել օրենսդիր մարմնին ՀՕՎ-ը կազմակերպելու կամ էլ բարձրացնելու արդեն իսկ իրականացվող ՀՕՎ-ի արդյունավետությունը և հանրային հաղորդակցման մակարդակը:

Ուղեցույցը կարող է օգտակար լինել ինչպես նոր ընտրված պատգամավորների համար, որոնք մեծ խանդավառությամբ և ընտրողներից նոր ստացած վստահությամբ ցանկանում են հնարավորինս սեղմ ժամկետում արդյունքի հասնել և նպաստել ՀՕՎ-ի արդյունավետ իրականացմանը, ինչպես նաև այն օգտակար կլինի Ազգային ժողովի աշխատակազմի փորձառու աշխատակիցներին, որոնց համար այս ուղեցույցը կարող է կառուցվածքային հենք հանդիսանալ հետագա ՀՕՎ-ի և համապատասխան քննարկումների կազմակերպման տեսանկյունից:

Այս ուղեցույցը կարող է նաև հիմք հանդիսանալ ՀՕՎ-ի գործընթացի վերաբերյալ վերապատրաստման ծրագրեր, սեմինարներ կազմակերպելու համար, ինչն իր հերթին կնպաստի խորհրդարանական գործունեությունն ավելի հասանելի, հասկանալի դարձնելու հանրության հատկապես այն

ներկայացուցիչների համար, որոնք դուրս են գտնվում ՀՕՎ-ի գործընթացից:

Ուղեցույցն օգտակար է նաև պատգամավորների գրասենյակի, կուսակցությունների խմբակցությունների աշխատակիցների համար (օգնականներ, խմբակցությունների փորձագետներ), որոնց օգնությամբ պատգամավորը կարող է հանձնաժողովներում ՀՕՎ-ի գործընթաց սկսելու նախաձեռնությամբ հանդես գալ:

Ուղեցույցը կարևոր ձեռնարկ է նաև ԱԺ-ի հետ առնչություն ունեցող այլ պետական մարմինների, քաղաքացիական հասարակության, լրատվամիջոցների և այլ կազմակերպությունների համար, որոնք պատկերացում, ինչպես նաև հնարավորություն կունենան հետագայում կազմակերպվելիք ՀՕՎ-ի գործընթացին աջակցելու ձևաչափի վերաբերյալ:

Սահմանափակումները

Ուղեցույցը չի հավակնում հրամցնելու ՀՕՎ-ի միակ ու անկրկնելի մեթոդոլոգիա կամ ներկայացնելու ՀՕՎ-ի իրականացման սպառիչ սցենարներ: Այն սահմանափակվում է սույլ ՀՕՎ-ի

գործընթացի, դրա իրականացման վերաբերյալ եղած տարբերակների ներկայացմամբ, որը չի բացառում այլ՝ միգուցե ավելի արդյունավետ տարբերակների գոյության փաստը: Այս ուղեցույցը ընթերցողին հնարավորություն է տալիս որոշակի իրավիճակի համար ընտրել ՀՕՎ-ի իրականացման առավել նախընտրելի սցենար: Ուղեցույցում քննարկվող թեմաները պետք է դիտարկվեն որպես գործնականում կիրառելի որոշումների կայացման հիմքեր ստեղծելուն միտված խորհրդատվական տեղեկագիրք:

Քանի որ ուղեցույցը կազմվել է ՀՕՎ-ի գործընթացի վերաբերյալ առկա ժամանակակից փորձառություններից ելնելով, ապա՝ ուղեցույցի օգտագործման արդյունքում հետագա արձագանքները թույլ կտան ամրապնդել և ընդլայնել առաջարկվող ՀՕՎ-ի գործընթացի կարգավորման հիմնական շրջանակները:

Ի՞նչ է ՀՕՎ-ը

Քանի որ ՀՕՎ-ն ընդգրկուն հայեցակարգ է, այն տարբեր խորհրդարանների և շահառուների համար կարող է տարբեր նշանակություն ունենալ:

Ուղիղ առումով ՀՕՎ-ն օրենքի կիրառման ստուգումն է այն ուժի մեջ մտնելուց հետո. արդյո՞ք օրենքի իրավական դրույթները կյանքի են կոչվել, գործու՞մ են, ինչպե՞ս են դատարաննե-

րը մեկնաբանում օրենքի դրույթները, ինչպե՞ս են իրավաբաններն ու քաղաքացիներն օգտագործում օրենքը:

Ավելի լայն առումով, ՀՕՎ-ը ուսումնասիրում է օրենքի ունեցած ազդեցությունները, արդյո՞ք օրենքի կիրառման արդյունքում հասանելի են դարձել ակնկալվող նպատակները և ի՞նչ արդյունավետությամբ:

ՀՕՎ-ի երկու հիմնական ուղղություններն են՝

- գնահատել կոնկրետ օրենքի կամ որոշակի օրենսդրական նորմի ուժի մեջ մտնելն ու տեխնիկական գործառնությունը,
- գնահատել ենթադրյալ քաղաքականության իրականացման արդյունքում ակնկալվող և առկա արդյունքների միջև եղած կապը:

Խորհուրդ է տրվում, որ Ազգային ժողովը իրականացնի գնահատման վերը նշված երկու ձևերը միաժամանակ:

Ի՞նչու՞ է առավել նպատակահարմար, որ ՀՕՎ-ն իրականացնի ՀՀ Ազգային ժողովը

Ընդունված է, որ պառլամենտն իր մարդկային և ֆինանսական ռեսուրսների զգալի մասը կենտրոնացնում է

օրենքների ընդունման գործընթացը կազմակերպելուն, այնուամենայնիվ, այդ թվում նաև սովորական պետք է լինի խորհրդարանի՝ ընդունված օրենքների կիրառման վերահսկողության իրականացումը: Օրենքների կիրառումը համալիր երևույթ է, որը կախված է ռեսուրսների մոբիլիզացիայից և տարբեր դերակատարներից, ինչպես նաև արդեն իսկ գործող օրենսդրությունից, առկա քաղաքական հանձնառություններից, բոլոր քաղաքական կուսակցությունների միջև եղած համագործակցության և փոխհամաձայնությունների մակարդակից:

Օրենքի կիրառումը մեխանիկորեն չի իրականացվում: Գոյություն ունեն օրենքի կիրառման վրա ազդող մի շարք հանգամանքներ, որոնք են՝

- ռեսուրսների դիվերսիֆիկացիան,
- շահառուների դիմադրությունը,
- համապատասխան ոլորտի իրավական դաշտի փոփոխությունները,
- տեղերում առկա փաստական հանգամանքների փոփոխությունները,
- այլ անկանխատեսելի հանգամանքներ, որոնք կարող են առաջանալ օրենքը կիրառելիս:

Օրենքների կիրառման գործընթացը կարող է խաթարվել նաև իշխանության ասիմետրիայի, դրա ոչ համաչափ կիրառման կամ բացառման և մի շարք այլ գործոններով պայմանավորված:

Չհաշված վերը թվարկված մարտահրավերները, հինգ առանցքային պատճառներ կան, համաձայն որոնց խորհրդարանը պարտավոր է վերահսկել և գնահատել օրենսդրության կատարումը, դրանք են.

- ժողովրդավարական կառավարման պահանջներն ապահովելու և իրավական որոշակիության և օրինականության սկզբունքների պահպանման անհրաժեշտությունը,
- նոր օրենսդրության հնարավոր անբարենպաստ ազդեցությունների առավելագույնս արագ և հեշտ տեղեկանալու և արագ արձագանքելու կարևորությունը,
- գնահատելու կարիքը, թե որքանով արդյունավետ է օրենքով ստեղծված մեխանիզմները կարգավորում այն խնդիրները և երևույթները, որոնց լուծման համար կոչված է տվյալ օրենքը,
- ելնելով կիրառման ընթացքում պարզված հանգամանքներից, օրենքի հետագա բարելավումը, մասնավորապես, օրենքի բարե-

լավումն անհրաժեշտ է իրակա- նացնել հիմնվելով միաժամանակ երկու հանգամանքների վրա, այն է՝ օրենքի ո՞ր դրույթներն են գործում և որոնք՝ ոչ, ինչպես նաև հաշվի առնելով օրենքի հիմքում ընկած նպատակների և օրենքի կիրառման հետևանքով ստացված արդյունքների միջև եղած պատճա-ռահետևանքային կապը,

- ի կատարումն ՀՀ Ազգային ժողովին ՀՀ Սահմանադրության 88-րդ հոդվածի 3-րդ մասի, որով ՀՀ Ազգային ժողովին վերապահվում է վերահսկողություն իրականացնել գործադիր իշխանության նկատմամբ:

Ո՞ր օրենքներն ընտրել ՀՕՎ-ի ենթարկելու համար: Ինչպե՞ս կատարել խելամիտ ընտրություն:

Ժամանակը և ռեսուրսներն առավել արդյունավետ օգտագործելու համար անհրաժեշտ է, որ խորհրդարանն առավելագույնս զգուշորեն ընտրի ՀՕՎ-ի ենթակա օրենքների ցանկը: Սահմանափակ թվով ռեսուրսների առկայության դեպքում առավել օգտակար է տարվա ընթացքում իրականացնել մի քանի օրենքների հիմնավոր և արդյունավետ ՀՕՎ, քան՝ բազմաթիվ օրենքներ ենթարկել մակերեսային, ոչ ամբողջական զննության: Նույն տրամաբանությամբ, ավելի նախընտրելի

է վերանայել օրենքի մեկ դրույթի կամ բաժնի կիրառման արդյունավետությունը, քան՝ ամբողջ օրենքը: Այս մոտեցումն ավելի ընդունելի է կիրառել ընդարձակ և բազմաթիվ բաժիններ պարունակող օրենքների ուսումնասիրության դեպքում:

Անհրաժեշտ է տարբերակել ՀՕՎ-ի ենթակա և ոչ ենթակա օրենսդրական ակտերը: Մասնավորապես, ՀՕՎ-ի ենթակա չեն.

1. սահմանումներ պարունակող ակտերը,
2. համախմբող իրավական ակտերը,
3. տեխնիկական փոփոխություններ մտցնող օրենքները,
4. այն իրավական ակտերը, որոնք պարունակում են կիրառման սխեմաներ, անկախ անալիզի սեփական մեթոդներ և հաշվետվության մեխանիզմներ:

Արտակարգ դրության մասին, հրատապ ռեժիմով, արտահերթ նիստերի կամ նստաշրջանների ընթացքում ընդունված օրենքները, հատկապես, երբ դրանք ազդում են քաղաքացիների ազատության սահմանափակման վրա, պարտադիր ենթակա են ՀՕՎ-ի: Այսպիսի օրենքները սուղ ժամանակի պատճառով հաճախ ընդունվում են առանց պատշաճ ուսումնասիրություն

իրականացնելու, ինչը հիմք է հանդիսանում այդ օրենքները առաջնահերթ կարգով ՀՕՎ-ի ենթարկելու համար:

Օրենքի ազդեցությունն ուսումնասիրելիս, անհրաժեշտ է հաշվի առնել նաև այլ օրենքների կիրառման արդյունքում ստացված կումուլյատիվ էֆեկտները: Անհրաժեշտ է պարզություն մտցնել, թե օրենքի տվյալ դրույթի կիրառման արդյունքում ստացված ազդեցությունները որքանով են պայմանավորված տվյալ ոլորտը կարգավորող և արդեն իսկ գործող այլ օրենքների դրույթներով: Շատ հազվադեպ է, որ օրենքի կիրառման արդյունքում ստացված արդյունքները պայմանավորված լինեն միայն տվյալ օրենքի դրույթներով, այն շատ հաճախ կրում է կումուլյատիվ բնույթ՝ պայմանավորված լինելով դաշտում առկա այլ իրավական նորմերով:


Օրենքի կիրառման և նրա ազդեցությունների վերաբերյալ բազմակողմանի պատկերացում կազմելու համար, կարևոր է ուշադրություն դարձնել և ուսումնասիրել նաև օրենքի կիրառումն ապահովող ենթաօրենսդրական

նորմատիվ իրավական ակտերը, փորձել հասկանալ, թե որքանով են դրանք բխում մայր օրենքի համապատասխան դրույթներից:

ՀՕՎ-ն իրականացնելիս անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նաև, թե որքանով է տվյալ օրենքի կիրառումը երաշխավորում կանանց և տղամարդկանց հավասար հնարավորությունների ապահովումը: Կարևոր է հավաքագրել համապատասխան տվյալներ, թե ո՞ր դրույթի կիրառումն է.

- հանգեցնում կանանց, տղամարդկանց կամ այլ խմբերի հավասար հնարավորությունների խաթարմանը,
- հանգեցնում այս կամ այն խմբի դոմինանտությանը,
- ազդում որևէ այլ խավի վրա, որին միտված չի եղել օրենսդիրը,
- ունենում կողմնակի ազդեցություններ որոշակի խմբերի գործունեության վրա, ինչը նախատեսված չի եղել օրենսդիրի կողմից:

Հետօրենսդրական վերահսկողության (ՀՕՎ) իրականացման փուլերը



ԽՈՐՀԴԱՐԱՆՈՒՄ ՀՕՎ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԵԹՈԴՈԼՈԳԻԱԿԱՆ ՔԱՅԼԵՐԸ

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՓՈՒԼ

Սինչ պլանավորման փուլին անցնելը, իրականացվում է առանցքային խնդիրների հստակեցում, մասնավորապես, ՀՕՎ-ի պարտադիր պահանջների, ՀՕՎ-ի շրջադարձային կետերի և ՀՕՎ-ի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսների որոշակիացում: Այս խնդիրների շուրջ քննարկումը և որոշման կայացումը էական է ՀՕՎ-ի հետագոտության ճիշտ կազմավորման, ինչպես նաև Խորհրդարանի գործունեության և առհասարակ օրենսդիր գործընթացի ճշգրիտ կազմակերպման համար:

Քայլ 1. ՀՕՎ-ի պարտադիր պահանջների որոշում ելնելով ընդունված օրենսդրական ակտի պահանջներից

ՀՕՎ-ի իրականացումն երաշխավորելու ամենաարդյունավետ մեխանիզմը Խորհրդարանի կողմից օրենքի ընդունման համար առաջնային համարվող, օրենքի կիրարկման պար-

տադիր պահանջների ապահովման ստուգումն է, կամ դրանց ապահովման վերաբերյալ հիմնավորումների ճշմարտացիության ստուգումը: Մասնավորապես.

- օրենքների նախագծերին կից Խորհրդարան ներկայացված հիմնավորումները, գործադիր մարմնի համապատասխան նախարարությունների մեկնաբանություններն այն մասին, թե տվյալ իրավական ակտը ընդ որտեղ և երբ է կարգավորելու,
- օրենսդրական գործընթացի ժամանակ պատգամավորների կողմից ներկայացված օրենքի նախագծի/երի վերաբերյալ փոփոխությունների հիմնավորումները, դրանց ընդունման կամ մերժման վերաբերյալ արձանագրություններում նշված հիմնավորումները: Սա կարող է կարևորագույն գործիք լինել, օրենքի կիրառման վերաբեր-

յալ հստակ պատկերացում կազմելու համար,

- օրենքում ներառված, օրենքն ուժի մտնելուց որոշ ժամանակ անց ուժը կորցրած համարվող դրույթները: Շատ հաճախ այս դրույթները լինում են քաղաքական փոխհամաձայնությունների արդյունք, սա այն գինն է, որը վճարում է կառավարությունն օրենքի ընդունման համար:

Խորհուրդ է տրվում, որ Խորհրդարանը ներդնի օրենքի կիրառման որքան հնարավոր է շատ պարտադիր պահանջներ: Սա հնարավորություն կտա հստակեցնել օրենքի կիրառման մեխանիզմները և հասանելի դարձնել օրենքի հիմքում ընկած նպատակները: Կարևոր է նաև ուշադրություն դարձնել Խորհրդարանի աշխատակազմի օրենքների վերաբերյալ փորձագիտության արդյունքներին, այդ թվում նաև առաջարկված փոփոխություններին և առաջարկություններին:

Աժ աշխատակազմի գործողություններ

- ՀՀ օրենսդրության համաձայն Աժ աշխատակազմն օժտված չէ օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալու գործառույթով, այնուամենայնիվ, Աժ մշտական հանձնաժողովների փորձա-

գետներին, Աժ աշխատակազմի համապատասխան վերլուծական վարչությունների աշխատակիցներին արգելված չէ համապատասխան ուսումնասիրությունների իրականացումը և դրանց հիման վրա անհրաժեշտ օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ պատգամավորներին համապատասխան եզրակացությունների, առաջարկությունների տրամադրումը: Հետևաբար Աժ աշխատակազմը կարող է խորհուրդ տալ պատգամավորներին Աժ համապատասխան հանձնաժողովների անդամներին հանդես գալու օրենքի որոշակի դրույթները վերանայելու կամ ուժը կորցրած ճանաչելու նախաձեռնությամբ:

Պատգամավորների գործողություններ

- Որոշել, թե որ օրենքների պարտադիր պահանջների կատարման վերահսկողությունն է անհրաժեշտ իրականացնել:
- Քննարկել և ընդունել օրենսդրական փոփոխություններ, որոնք ուղղված են օրենսդրության որոշակի դրույթների վերանայմանը կամ ուժը կորցրած ճանաչելուն, կամ խորհրդարանական քննարկումների արդյունքում առաջարկել կառավարությանը հանդես գալ որոշակի

օրենքների կիրառման վերաբերյալ զեկույցով:

Քայլ 2. ՀՕՎ-ի ուսումնասիրության առանցքային կետերի բացահայտումը՝ պարտադիր պահանջների բացակայության պարագայում

Անհրաժեշտ է հաշվի առնել, որ ոչ բոլոր հանգամանքներում է հնարավոր կամ ցանկալի ՀՕՎ-ի իրականացման պարտադիր պահանջների սահմանումը: Այս պարագայում որպես այլընտրանքային մոտեցում կարող է լինել օրենսդրության որոշ հատվածի՝ ՀՕՎ-ի իրականացման ժամկետների հետաձգումը: Օրենքի ուժի մտնելուց հետո դրա կիրառման վերաբերյալ ՀՕՎ իրականացնելու որոշման կայացումն ավելի հեշտացնելու նպատակով կարևոր է առանձնացնել և համաձայնության գալ ՀՕՎ-ի ենթակա առանցքային խնդիրների և նպատակների շուրջ՝ գիտակցելով, որ Խորհրդարանը հիմնական պատասխանատվությունն է կրում ճիշտ ժամանակին ՀՕՎ սկսելու հարցում:

ՀՕՎ-ի իրականացմանը դրդող պայմանների ի հայտ գալը հանգեցնում է որոշման, համաձայն որի հիմնավորվում է ՀՕՎ-ի իրականացումը կամ դրա իրականացման անհրաժեշտության բացակայությունը:

Աժ աշխատակազմի գործողությունները

- Վերլուծել ՀՕՎ-ի իրականացման համար տվյալ օրենսդրության առանցքային կետերը՝ Ազգային ժողովի համապատասխան Հանձնաժողովին առաջարկություն ներկայացնելու համար:
- Նախագծել և Ազգային ժողովի համապատասխան Հանձնաժողովին կամ Խորհրդարանին ներկայացնել ՀՕՎ-ի իրականացման համար առանցքային խնդիրների վրա հիմնված առաջարկություն:

Պատգամավորների գործողությունները

- Տարբերակել ՀՕՎ-ի համար որոշված առանցքային խնդիրներն ինչ չափով կարող են ընդգրկվել ՀՕՎ-ի հետազոտության գործընթացում՝ ներկայացնելով Ազգային ժողովի համապատասխան Հանձնաժողովի աշխատակազմին որպես աշխատանքային փաստաթուղթ կամ Աժ Խորհրդին ներկայացնել պաշտոնական գրություն:

Քայլ 3. ՀՕՎ-ում մարդկային ռեսուրսների ընդգրկումը

Գոյություն ունեն ՀՕՎ-ում մարդկային ռեսուրսների ներգրավման տարբեր եղանակներ: ՀՕՎ իրականացնող

հանձնաժողովի աշխատակազմը որոշում է տվյալ օրենքի ՀՕՎ-ով զբաղվող անձանց շրջանակը: Հանձնաժողովը համագործակցում է տվյալ օրենքի կամ օրենսդրական դաշտի հետ առնչվող այլ հանձնաժողովների աշխատակազմերի հետ: Այսպիսի համագործակցությամբ երաշխավորվում է մարդկային ռեսուրսների ռացիոնալ օգտագործումը: Այն հնարավորություն է տալիս նաև խուսափել անհարկի համընկնումներից, այսինքն միևնույն ֆունկցիան իրականացնող անձանց միաժամանակ ՀՕՎ-ի գործընթացներում ընդգրկելուց:

Կախված ՀՕՎ-ի ենթակա օրենքների առանձնահատկություններից՝ կարելի է ստեղծել նաև ժամանակավոր հանձնաժողով: Այդ նպատակով ԱԺ նախագահը մշտական գործող հանձնաժողովներին հանձնարարում է թեկնածուներ առաջարկել տվյալ օրենքի ՀՕՎ-ն իրականացնելու համար:

Սովորաբար ՀՕՎ-ում մարդկային ռեսուրսների ընդգրկումը կախված է տվյալ խորհրդարանի գործունեության կանոնակարգի ընձեռած հնարավորություններից, այսինքն՝ «ՀՀ ԱԺ կանոնակարգ» օրենքից, հանձնաժողովների հնարավորություններից, այդ թվում նաև ՀՀ ԱԺ մշտական հանձնաժողովներում ընդգրկված պատգամավորների արհեստավարժությունից, նրանց՝ տվյալ ոլորտի վերաբերյալ եղած հետաքրքրվածության աստիճանից,

նից, խորհրդարանական մշակույթից, մարդկային ռեսուրսների հասանելիությունից, առկա կենսափորձից:

ՀՕՎ-ի թիմում պետք է ընդգրկվեն անձինք, ովքեր օժտված են անհրաժեշտ գիտելիքներով ու հմտություններով, և հստակ նպատակաուղղված աշխատանք իրականացնեն: Սովորաբար հաջողված է լինում այն թիմը, որում ընդգրկված են տարբեր ոլորտի մասնագետներ, տարբեր բազային գիտելիքներով օժտված անձինք և տարբեր սեռի ներկայացուցիչներ: Այսպիսի ընտրությունը հնարավորություն է տալիս աշխատակիցներին փոխլրացնել միմյանց և աջակցել մեկը մյուսին օրենքի կիրառման գնահատումն ավելի արդյունավետ իրականացնելու հարցում: Կոմպլեմենտարության սկզբունքի կիրառումը հնարավորություն է տալիս տարբեր հմտություններով և գիտելիքների պաշարով օժտված մասնագետների շնորհիվ առավելագույնս արդյունավետ հետազոտություն իրականացնել և հասնել սիներգիզմի հաստատմանը:

ԱԺ ղեկավարության գործողությունները (ԱԺ նախագահ կամ ԱԺ խորհուրդ)

- Որոշել, թե ՀՕՎ-ի իրականացման ղեկավարը կլինի «ԱԺ նախագահ կամ ԱԺ խորհուրդ»
- մշտական հանձնաժողով,

- ժամանակավոր հանձնաժողով,
- առանձին վարչություն կամ կենտրոն,
- հրավիրված փորձագետներից կազմված թիմ, որը խորհրդարանի հետ համատեղ կմշակի ՀՕՎ-ի սխեման:

Աժ դեկավարության գործողությունները (Աժ նախագահ կամ Աժ խորհուրդ, քարտուղարություն)

- Ապահովել ՀՕՎ-ն իրականացնող մարմնի և նրանում ընդգրկված Աժ աշխատակազմի համապատասխան աշխատակիցների հորիզոնական համագործակցությունը: Հետևել հետազոտող խմբի, հանձնաժողովի աշխատակազմի, խորհրդարանի աշխատակազմի իրավաբանական վարչության և քարտուղարության կոմունիկացիայի համար անհրաժեշտ միջավայրի ստեղծմանը, որպեսզի ապահովվի որպես միասնական թիմ աշխատելու համար բոլոր հնարավորությունները:

Քայլ 4. ՀՕՎ-ում այլ ֆինանսական ռեսուրսների ներգրավումը

Արդյունավետ ՀՕՎ-ի իրականացման համար սահմանափակ քանակով

լրացուցիչ ֆինանսական միջոցներ անհրաժեշտ կլինեն տվյալների հավաքագրման, դաշտային այցելությունների, խորհրդարանում և խորհրդարանից դուրս խորհրդարանական լուսմների, արտագնա նիստերի կազմակերպման կամ դրսից լրացուցիչ փորձագետների ներգրավման համար:

Մինչ ՀՕՎ-ի գնահատման սկսելը, խորհուրդ է տրվում, որ խորհրդարանը համաձայնության գա աշխատանքային պլանի շուրջ, որը պետք է ընդգրկի աշխատանքների իրականացման տեսանկյունից առանցքային կետերը, հաղորդակցման մոտեցումները, ժամանակացույցը և ակնկալվող բյուջեն:

Աշխատանքային բյուջեն պետք է ներառի աշխատավարձերը, ուսումնասիրության և դաշտային այցելությունների արժեքը, խորհրդատվությունների, հանդիպումների, հաղորդակցությունների (հեռախոս, տրանսպորտային միջոցներ ևն) ծախսերը: Հանձնաժողովը կամ ՀՕՎ-ի թիմը պարտավոր է աշխատանքային պլանը կազմել համաձայն մարդկային և նյութական ռեսուրսների հասանելիության: Աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու և աշխատանքն ավելի արդյունավետ դարձնելու համար խորհրդարանը կարող է օգտագործել ՀՀ Ազգային վիճակագրական կոմիտեի կողմից արդեն իսկ հավաքագրված վիճակագրական տեղեկատվությունը, միջազգային կազմակերպությունների

կողմից կազմված զեկույցները, տվյալ օրենքի վերաբերյալ տեղեկատվության պարունակող հետազոտական զեկույցները, տեղական հետազոտական կենտրոնների կամ գիտնականների կողմից իրականացված հարցախույզների արդյունքները: Վեր նշվածների ուսումնասիրությունից հետո ՀՕՎ-ի թիմը կարող է իր աշխատանքը կենտրոնացնել այն ոլորտների վրա, որոնք մնացել են չբացահայտված կամ արժե ուշադրությունը կենտրոնացնել տվյալ ոլորտն առավել հիմնավոր ուսումնասիրելու համար:

Աշխատանքային պլանը և դրա բյուջեն ամբողջացնելու համար անհրաժեշտ է, որ Հանձնաժողովը կամ ՀՕՎ-ի թիմը առանձնացնի այն գործոնները, որոնք հակված են հանգեցնելու ՀՕՎ-ի բյուջեի ավելացմանը, օրինակ թանկարժեք փորձագիտության անցկացման գերանհրաժեշտությունը, բազմաթիվ դաշտային այցելությունները, հրատապ հետազոտությունների կամ հարցումների իրականացումը:

Խոստումնալից աշխատանքային պլանի և բյուջեի կազմման համար կարևոր է երկրորդային տվյալների մանրամասն և հանգամանալից ուսումնասիրություն կատարելուց հետո անցնել առաջնային տվյալների հավաքագրմանը: Նախնական ուսումնասիրությունը թույլ կտա վեր հանել ՀՕՎ-ի համար տվյալ օրենքի կիրառման վերաբերյալ առկա առավել բաց կողմերը

և խնայել ֆինանսական միջոցները, խուսափել ավելորդ անգամ կրկնակի ուսումնասիրություն իրականացնելուց և կնպաստի առկա ֆինանսական միջոցներն առավել արդյունավետ օգտագործելուն:

Իդեալական կլինի, որ ՀՕՎ-ի բոլոր ծախսերը Խորհրդարանը կարողանա իրականացնել սեփական բյուջեի հաշվին: Եթե այս սցենարը իրատեսական չէ, ապա՝ շատ կարևոր է տեխնիկական միջոցների և մարդկային ռեսուրսների համար անհրաժեշտ հիմնական ծախսերի ֆինանսավորման միջոցների հայթայթումը: Այս մոտեցման դրական կողմերից մեկն այն է, որ դոնորների ներգրավումը հնարավոր է մեծացնի ՀՕՎ-ի մինչև վերջ իրականացման հավանականությունը: Սա հնարավորություն կտա, որ ՀՕՎ-ի գործընթացում չընդգրկված որոշ շահագրգիռ անձինք և ՀՕՎ-ի արդյունքների պոտենցիալ օգտագործողները ևս ներգրավվեն ՀՕՎ-ում, որն իր հերթին ապագայում կարող է հանգեցնել ՀՕՎ-ի գնահատման գործընթացին պոտենցիալ նպաստողների շրջանակի հետագա ընդլայնմանը:

ԱՎ աշխատակազմի գործողությունները

- Հավաստիանալ, թե ինչ ֆինանսական միջոցներ է հնարավոր ներգրավել կամ որքան ֆինանսական ռեսուրսներ են անհրաժեշտ

ՀՕՎ-ի իրականացման համար և պատրաստել համապատասխան ՀՕՎ-ի բյուջեի նախագիծ:

- Դիտարկել դրսից ՀՕՎ-ի գնահատման համար դոնորային միջոցների ներգրավման անհրաժեշտությունը և համապատասխան միջոցներ ձեռնարկել:
- Գնահատել քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՀԿ-եր) կարողությունները՝ ՀՕՎ-ի գործընթացին ֆինանսապես աջակցելու առումով:

Աժ դեկավարության գործողությունները (Քարտուղարություն, Աժ նախագահ կամ Աժ խորհուրդ)

- Որոշում կայացնել առաջարկվող ՀՕՎ-ի բյուջեի վերաբերյալ և տրամադրել անհրաժեշտ ռեսուրսները, այդ թվում նաև ապահովել արտաքին աղբյուրներից հնարավոր ֆինանսական միջոցների ներգրավումը:

ՀՕՎ-ի պլանավորման փուլերը

Ընտրել ՀՕՎ-ի վերանայման ենթակա օրենքի ընտրություն

ՀՕՎ-ի նպատակների և խնդիրների սահմանում

Օրենքը կիրառող մարմինների շրջանակի հաստատում

Համապատասխան շահառուների շրջանակի հաստատում

Տվյալներ բազայի հավաքում

ՀՕՎ-ի ժամանակացույցի սահմանում

Մինչ ՀՕՎ-ի հարցումների սկսելը անհրաժեշտ է ուշադրություն դարձնել հետևյալ կարևոր հանգամանքների վրա:

- Ընտրել այն օրենքը/ները, որոնց կիրառումը պետք է գնահատվի,
- սահմանել ՀՕՎ-ի նպատակներն ու խնդիրները,
- հաստատել օրենքի կիրառումն իրականացնող մարմինները և համապատասխան շահառուների շրջանակը,
- հավաքել անհրաժեշտ տեղեկատվություն և տվյալներ,
- որոշել ՀՕՎ-ի իրականացման ժամանակացույցը և կազմել ՀՕՎ-ի գործողությունների պլան- գրաֆիկը:

Քայլ 5. Ընտրել ՀՕՎ-ի գնահատման ենթակա օրենքները և իրավական փաստաթղթերը

Ըստ էության բոլոր օրենքներն էլ կարող են ՀՕՎ-ի գնահատման առարկա լինել, սակայն ոչ միշտ է պահանջվում կամ նպատակահարմար ՀՕՎ-ի իրականացումը: Գործնականում գնահատման ենթակա օրենքների և

իրավական ակտերի շրջանակի ընտրությունը հիմնված է որոշակի չափանիշների վրա, որը ներառում է իրավական ակտի բնույթը և համալիր լինելու հանգամանքը, իրավական ակտի կիրառման գնահատման համար պահանջվող ժամանակը, կիրառումից ակնկալվող դժվարությունների բնույթը, օրենքի հիմքում ընկած ռազմավարական նպատակների բնույթը, կիրառման ընթացքում նոր ռիսկերի և վտանգների ի հայտ գալու հնարավորությունները ևն:

Սովորաբար խորհուրդ է տրվում ՀՕՎ գնահատումն իրականացնել օրենքն ուժի մեջ մտնելուց առնվազն երեք տարի անց, այդ դեպքում միայն հնարավորինս տեսանելի կլինի օրենքի դրույթների կիրառման արդյունքներն ու էական նշանակություն ունեցող հետևանքները:

ՀՕՎ-ի ուսումնասիրման շրջանակներն ուրվագծելիս կարևոր է որոշել.

- արդյո՞ք անհրաժեշտ է գնահատել օրենքն ամբողջությամբ, թե՞ միայն որոշակի դաշտը կարգավորող առանձին դրույթները,
- գնահատել միևնույն ոլորտը կարգավորող մի քանի օրենքները միաժամանակ (օր. սոցիալական

բարկեցություն, առողջապահություն, բիզնես և այլն),

- օրենքից բխող և օրենքի կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական իրավական ակտերը:

ՀՕՎ-ի շրջանակների վերաբերյալ որոշումը պետք է բխի խորհրդարանի և կառավարության ռազմավարական նպատակներից և առաջնահերթություններից, ուսումնասիրության համալիր բնույթից ու ծախսերի մեծությունից, օրենքի իրավական, քաղաքական, տնտեսական և սոցիալական ազդեցություններից և նորարարական բնույթից:

Ընդհանուր առմամբ, բոլոր այն իրավական դրույթները, որոնք ազդում են (իրավականորեն, քաղաքականապես, տնտեսապես և սոցիալակապես) քաղաքացիների, բնակչության և բիզնես միջավայրի վրա, պետք է ենթարկվեն մոնիտորինգի: Գոյություն ունեն օրենքներ, որոնց միայն մի քանի դրույթների կիրառումն է ունենում վերը նշված ազդեցությունները, հետևաբար, ավելի տրամաբանական կլինի գնահատել միայն օրենքի հենց այդ դրույթների կիրառումը:

Կարևոր է հաշվի առնել, որ օրենքի կիրառման իրավական, քաղաքական, տնտեսական և սոցիալական ազդեցությունները կոմուլյատիվ բնույթ ունեն և հանդիսանում են միևնույն ժա-

մանակ կիրառվող մի քանի օրենքների և ենթաօրենսդրական իրավական ակտերի կիրառման հետևանքով առաջացած արդյունքը: Հետևաբար, նախապես անհրաժեշտ է նկատի ունենալ օրենսդրության կոմուլյատիվ բնույթը՝ մոնիտորինգի ենթակա օրենքներն ընտրելիս: Օրինակ, «Քրեական օրենսգրքի» կիրառման գնահատումը չի կարող իրականացվել առանց գնահատելու «Քրեական դատավարության օրենսգիրքը» և այլն:

Աժ աշխատակազմի գործողությունները

- Պատրաստել ՀՕՎ-ի «Ծրագրի նախագիծ» 3-5 էջի սահմաններում, որը կընդգրկի վերանայվող ոլորտում վարվող քաղաքականության իրավիճակային վերլուծություն, ուսումնասիրման, առաջարկություններ գնման ենթակա օրենքի/ների վերաբերյալ, ՀՕՎ-ի հետազոտության նպատակներն ու շրջանակները:
- Քննարկել ՀՕՎ-ի «Ծրագրի նախագիծը» համապատասխան Հանձնաժողովի նախագահի հետ, ճշգրտել և կատարելագործել մինչև նախագծի վերջնական տարբերակի ընդունումը:

Աժ պատգամավորների գործողությունները

- Հանձնաժողովն ընդունում կամ հաստատում է առաջարկվող ՀՕՎ-ի «Ծրագրի նախագիծը»:

Քայլ 6. ՀՕՎ-ի հնարավոր նպատակների սահմանումը և խորհրդարանական լուծումների թեմաների որոշումը

Սկզբունքորեն, ՀՕՎ-ը նպատակաուղղված է գնահատելու օրենքի կիրառումը և դրա ազդեցությունը: Նեղ իմաստով, ՀՕՎ-ն ուսումնասիրում է օրենքի դրույթների ուժի մեջ մտնելու հանգամանքը, ինչպես է դատարանը մեկնաբանում օրենքի դրույթները և ինչպես են իրավաբանները և քաղաքացիները օգտագործում օրենքը: Լայն առումով, ՀՕՎ-ն ուսումնասիրում է օրենքի ազդեցությունը, արդյո՞ք օրենքի հիմքում ընկած կամ տվյալ օրենքով նախատեսված նպատակները հասանելի են դարձել, թե ոչ, եթե այո, ապա ի՞նչ արդյունավետությամբ: Խորհուրդ է տրվում, որպեսզի օրենքներն ուսումնասիրվեն, մոնիտորինգի ենթարկվեն վերը նշված երկու առումներով՝ ելնելով օրենքի ուժի մեջ մտնելու և նրա կիրառման ազդեցությունները գնահատելու նպատակահարմարության տեսանկյունից:

Գնահատման նպատակները կարող են որոշվել օրենքի ընդունման

պահին հետապնդվող նպատակներով, որոնք սովորաբար արտացոլվում են օրենքի սկզբնական բաժնում (հիմնական դրույթներ, նպատակներ, խնդիրներ և այլն), օրենքի ընդունման հիմնավորման մեջ (որտեղ նկարագրվում է հիմնախնդիրը, որի լուծմանն է միտված տվյալ օրենքի ընդունումը), կից տեղեկատվական փաստաթղթերում, ինչպես նաև նախարարությունների ամփոփաթերթիկներում, որտեղ նշվում են տվյալ ոլորտի վրա օրենքի հնարավոր ազդեցությունները (տե՛ս Իրավական ակտերի մասին օրենք, հոդված 5):

Օրենքի կիրառման վերահսկողության արդյունավետությունը բարձրացնելու համար հետևյալ գործոնների գնահատականը պետք է ընդգրվի ՀՕՎ-ի հիմնական նպատակների շարքում.

- օրենսդրության ազդեցությունը (իրավական, քաղաքական, սոցիալական, տնտեսական և այլն),
- հիմնական և ենթաօրենսդրական իրավական ակտերի կիրառման արդյունավետությունը, համապատասխան գործիքակազմի առավել ընդգրկուն կիրառման տեսանկյունից,
- քաղաքականության նպատակների իրականացման աստիճանը,

- նախատեսված ազդեցության, ծախսերի և օգուտների կանխատեսման ճշգրտությունը,
- օրենքի կիրառման արդյունքում նոր, չկանխատեսված ազդեցությունների (սոցիալական, տնտեսական և այլն) առկայությունը,
- օրենքի կիրառմանը խոչընդոտող հանգամանքները,
- շահագրգիռ կողմերի և շահառուների՝ անհրաժեշտ չափով տեղեկացվածությունը,
- օրենքի՝ դատարանում վիճարկման փաստը,
- օրենքի ազդեցությունը գենդերային հավասարության վրա,
- օրենքի կիրառման անհրաժեշտության արդիականությունը:

Որպես ՀՕՎ-ի բաղկացուցիչ մաս, կարող է օգտակար լինել հանրային լուսմների կազմակերպումը: Այդ դեպքում անհրաժեշտ է ճշգրտորեն հստակեցնել հանրային լուսմների նպատակները ևս, որպեսզի լուսմներն առավելագույնս նպաստեն ՀՕՎ-ի համար անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրմանը:

Հիմնական դեպքերում, հանրային լուսմները նպատակաուղղված են լի-

նում օրենքի կիրառման վերաբերյալ փորձագետների, շահառուների, հանրության ներկայացուցիչների տեսակետների բարձրաձայնմանը: Այլընտրանքային տարբերակ կարող է լինել հանրությանը ընթացիկ ՀՕՎ-ի վերաբերյալ տեղեկացումը և հանրության իրազեկվածության աստիճանի բարձրացումը: Իհարկե, վերը նշված երկու նպատակներն էլ կարող են ընկած լինել հանրային լուսմների հիմքում, բայց, այնուամենայնիվ, ՀՕՎ իրականացնող Հանձնաժողովը պետք է որոշի, թե լուսմների ի՞նչ ձևաչափն է տվյալ պարագայում առավել արդյունավետ:

Եթե հանրային լուսմների նպատակն է հավաքագրել օրենքի որոշակի դրույթների կիրառման վերաբերյալ տեղեկատվություն, կարծիքներ, առաջարկություններ, եզրակացություններ, ապա քննարկման առաջարկվող օրակարգը, քննարկման ձևաչափը և ներկայացվող մեխանիզմները պետք է ձևավորվի այնպես, որ այն նպաստի ակնկալվող տեղեկատվության վերհանմանը: Աժ աշխատակազմին հաճախ տրվում է այսպիսի մեխանիզմներով լուսմների օրակարգ ձևավորելու առաջադրանք:

Հանրային լուսմների նպատակները հստակեցնելը Հանձնաժողովին հնարավորություն կտա առավել արդյունավետ կողմնորոշվել հանրային սպասումները գնահատելիս: Եթե նպատակները հստակեցված չեն,

ապա փորձագետներն ու քաղաքացիները կգարգացնեն իրենց սեփական, մեկը մյուսից տարբերվող սպասումները, որը լրացուցիչ դժվարություն կստեղծի հանձնաժողովի անդամների համար՝ հանրային կարիքներն ու մտահոգությունները գնահատելու և քավարարելու տեսանկյունից:

Աժ աշխատակազմի գործողությունները

- Պատրաստել ՀՕՎ-ի իրականացման «Ծրագրի նախագիծ», որում պետք է ընդգրկվեն ծրագրի նպատակները, մոնիտորինգի ենթարկվող օրենքների ցանկը և ուսումնասիրման սահմանները:
- Գնահատել հանրային լուսմների հնարավոր օգտակարությունը ՀՕՎ-ի հարցումների իրականացման համար և այն ընդգրկել «Ծրագրի նախագծում»:

Աժ պատգամավորների գործողությունները

- Հանձնաժողովն ընդունում կամ հաստատում է առաջարկվող ՀՕՎ-ի «Ծրագրի նախագիծը»:

Քայլ 7. Հստակեցնել և գնահատել օրենքի կիրառումն իրականացնող մարմինների շրջանակը

«Կան լավ օրենքներ, բայց չեն գործում» մտածելակերպն իր մեջ ներառում է հակասական տարրեր: Այն օրենքը, որը չի պարունակում արդյունավետ կիրառման մեխանիզմներ, կարելի է համարել անհաջող գրված կամ թերի: ՀՕՎ-ի իրականացման կարևորագույն փուլերից մեկը օրենքը կիրառող մարմնի, օրենքով սահմանված լիազորությունների շրջանակներում, օրենքով նախատեսված տվյալ օրենքի կիրառումն ապահովող գործողությունների ճիշտ գնահատումն է:

Օրենքը կիրառող մարմինները սովորաբար կանգնում են հետևյալ հինգ խումբ խնդիրների առջև.

- կիրառել օրենքի կիրարկումն ապահովող համապատասխան միջոցներ,
- մնալ որպես տվյալ օրենքը կիրառող կազմակերպություն,
- ստեղծել օրենքի կիրառումն ապահովող անհրաժեշտ ընթացակարգեր,
- կարգավորել օրենքի կիրառման ընթացքում առաջացող վեճերը,

- մոնիտորինգի ենթարկել պաշտոնատար անձանց օրենքի կիրառման համար ցուցաբերած վարքագիծը:

ՀՀ-ի հետազոտությամբ կարող է նաև գնահատվել օրենքի հեղինակների կողմից օրենքն իրականացնող համապատասխան մարմնի ընտրության հիմնավորվածությունը, արդյո՞ք օրենսդիրը օրենքի կիրառումն ապահովող մարմնի ընտրությունը ճիշտ է իրականացրել, արդյո՞ք տվյալ մարմինը կարող է պատշաճ կերպով հաղթահարել նոր օրենքի պահանջները: ՀՀ-ի հետազոտությունով կարելի է պարզել, թե արդյո՞ք օրենքն ընդունելիս օրենքի մեջ ներառվել է նախագծողների կողմից առաջարկվող մոդելը, եթե ոչ, ապա՝ ինչու՞:

Սովորաբար օրենքով նախատեսվում է օրենքի կիրառման համար ՀՀ կառավարության լիազորած պետական մարմինը կամ մարմինների շրջանակը:

Նախարարություն, մարզպետարան, ինքնավար պետական կառավարման մարմին կամ տեղական ինքնակառավարման մարմին, պետական կառավարչական մարմին

Համաձայն ՀՀ օրենսդրության պոտենցիալ պետական լիազոր մար-

մին կարող է հանդիսանալ որևէ նախարարություն, մարզպետարան, պետական կառավարչական մարմին, ինքնավար պետական կառավարման մարմին կամ տեղական ինքնակառավարման մարմին: Այսպիսի ադմինիստրատորիվ ինստիտուտներն օրենքով սահմանված կարգով օժտված են պատշաճ ստորաբաժանումներով, որոնք միտված են արդյունավետ և ռացիոնալ իրականացնել կառավարության գործառույթները և կիրառել օրենսդրությունը:

Շատ երկրներում քաղաքացիական ծառայությունը հարաբերականորեն անկախ է քաղաքական այս կամ այն ներգործությունից և բավականաչափ լավ զինված է օրենքների կիրառումն ապահովելու համար անհրաժեշտ հմտություններով ու գործիքակազմով:

Նախարարությունները, մարզպետարանները ծառայում են որպես մասնագիտացված կառույցներ և որպես օրենքը անմիջականորեն կիրառող մարմին: Նախարարություններում հիմնականում աշխատում են մասնագետներ, որոնք կայացնում են համապատասխան որոշումներ: Պետական պաշտոնյաները հիմնականում շահագրգռված են իրենց պարտականությունները կատարելու հարցում, որը դրական է օրենքի կիրառումն ապահովելու տեսանկյունից:

Մյուս կողմից, նախարարությունների, անցյալից ժառանգած բյուրոկրատական քաշքշուկները, ձանձրալի ընթացակարգերը հաճախ առիթ են դառնում օրենքի կիրառման գործընթացի դանդաղեցման:

ՀՕՎ-ի հետազոտությունով կարելի է գնահատել, թե ինչ չափով է հիերարխիկ կառավարման համակարգը (նախարարություններ, մարզպետարաններ, համայնքապետարաններ) ապահովում պետական պաշտոնյաների գործունեության թափանցիկությունը, հաշվետվողականությունը և շահագրգիռ անձանց պետական կառավարման մասնակցությունը:

Մասնավոր ընկերություն կամ ՀԿ

Որոշ երկրներում, որոշակի հանգամանքներում կառավարությունը օրենքի կիրառումն իրականացնում է մասնավոր հատվածի միջոցով: Օրինակ, բժշկական հաստատությունների գործունեությունը կարգավորող օրենքը կարող է լիազորել առողջապահության նախարարությանը պայմանագրեր կնքել մասնավոր ընկերությունների կամ անհատ ձեռնարկատերերի հետ պետական բժշկական հաստատությունները վճարովի կառավարելու համար, կամ քրեակատարողական հիմնարկների մասին օրենքով կարող է արդարադատության նախարարությանը լիազորվել մասնավոր կազմա-

կերպության հետ պայմանագիր կնքել որոշակի գումարով քրեակատարողական հիմնարկները կառավարելու համար: Որոշ երկրներում օրենսդրությունը թույլատրում է սոցիալական ապահովության նախարարությանը պայմանագիր կնքել ՀԿ-երի հետ սոցիալական բարեկեցության ծրագրերը ղեկավարելու, օրինակ, փոխպատվաստումների արշավներ, հաշմանդամներին աջակցություն իրականացնելու և այլն:

Մասնավոր ընկերությունները կարող են օգտագործել իրենց սեփական ռեսուրսները (մարդկային, ֆինանսական և տեխնիկական) իրենց առջև դրված խնդիրները լուծելու համար: Ոմանք պնդում են, որ մասնավոր ընկերությունները որոշակի մրցակցության պայմաններում ենթադրաբար ավելի արդյունավետ են գործում, քան պետական կառավարման մարմինները:

Այնուամենայնիվ, կարող են լինել նաև օրենքի կիրառման արդյունավետության անկումներ: Օրինակ, մասնավոր ընկերությունները միշտ ձգտում են առավելագույն եկամուտ ստանալուն, որը կարող է խանգարող հանգամանք հանդիսանալ օրենքի կիրառումն առավել արդյունավետ իրականացնելուն: Ի տարբերություն պետական կառավարման մարմինների, մասնավոր ընկերությունների համար պարտադիր պայման չէ գործունեության թափան-


ցիկլությունը, հաշվետվողականությունը և մասնակցային կառավարման առկայությունը:

ՀՕՎ-ի հետազոտությունով կարելի է գնահատել օրենքով մասնավոր ձեռնարկությունների գործունեության համար սահմանված խնդիրների իրականացումը և հատկապես կենտրոնանալ վերը նշված խնդիրներին:

Աժ աշխատակազմի գործողությունները

- Պատրաստել օրենքով նախատեսված պետական կառավարման լիազոր մարմնի դերի մանրակրկիտ գնահատումը և այն դարձնել հասանելի Հանձնաժողովին/ ներին կամ ՀՕՎ իրականացնող կառույցին՝ ՀՕՎ-ի հետազոտության կազմման համար: Կարող է կազմվել գնահատման համար պահանջվող պարտադիր ստուգման ենթակա բազային տեղեկատվության ցանկը:

Օրենքի կիրառումն ապահովող լիազոր մարմնի գործունեության պարտադիր ստուգման ենթակա ցուցակ



1. Լիազոր մարմնի պարտականություններ և լիազորություններ

- Ինչ պարտականություններ են նախատեսվել լիազոր մարմնի համար: Արդյո՞ք լիազոր մարմինն իրականացնում է այդ պարտականությունները, ինչ չափով է այն նպաստում փոխելու կամ բացառելու շահառուների ոչ ադեկվատ վարքագծի դրսևորմանը:

- Ինչ համապատասխան միջոցներ են կիրառում պաշտոնատար անձինք իրենց պարտականությունները կատարելիս: Արդյո՞ք այդ միջոցները նպատակատուղված են տվյալ օրենքով կարգավորվող խնդրահարույց վարքագծի հետ կապված խնդիրների լուծմանը:
- Արդյո՞ք լիազոր մարմինն օժտված է պատժամիջոցներ կիրառելու լիազորությամբ: Եթե այո, ապա՝ ինչ տեսակի: Ինչ հաճախականությամբ են պատժամիջոցները կիրառվել: Որքանո՞վ է օգնում այս մեթոդը լուծել հայտնաբերված խնդրահարույց վարքագծի հետ կապված խնդիրները:

II. Լիազոր մարմնի մարդկային ռեսուրսները

- Լիազոր մարմնի քանի պետական պաշտոնյա է նախատեսված ընդգրկել օրենքի կիրառումն ապահովելուն: Արդյո՞ք այդ քանակը պահպանվել է: Ինչու՞ այո (ոչ):
- Ըստ օրենքի ինչպիսի մասնագիտական որակներ են պահանջվում տվյալ օրենքի կիրառումն ապահովող պետական պաշտոնյայի համար, ինչպե՞ս է կատարվում վերջինիս ընտրությունը և նշանակումը:
- Ո՞ր դեպքում և ո՞ր պաշտոնյան կամ մարմինը կարող է պետական պաշտոնյային պաշտոնապես ազատել տվյալ պաշտոնից (օր. ժամկետի լրանալ, հրաժարական, կենսաթոշակային տարիք ևն):

III. Պոտենցիալ հնարավորություններ

- Ու՞մ հետ են պետական պաշտոնյաները, կամ օրենքը կիրառող մարմինները խորհրդակցել օրենքի կիրառումն ապահովելու համար: Արդյո՞ք այն ընդգրկել է բոլոր շահագրգիռ անձանց: Հատկապես պետք է ուշադրություն դարձնել արդյո՞ք տվյալ օրենսդրությունը պահանջում է խորհրդակցել աղքատների, կանանց, երեխաների, փոքրամասնությունների, բնական միջավայրի, մարդու իրավունքների, օրենքի գերակայության պաշտպանների հետ:
- Ինչպե՞ս և ումի՞ց են պետական պաշտոնյաները հավաքագրում փաստեր օգնելու կետ 1-ում նշված անձանց վերաբերյալ օրենքում նշված դրույթներն իրականացնելու համար:

IV. Հետադարձ կապ

- Ինչպե՞ս է լիազոր մարմինը տեղեկանում շահագրգիռ կողմերի՝ օրենքին պատշաճ ենթարկվելու մասին:
- Արդյո՞ք լիազոր մարմինը սպասում է մինչև համապատասխան բողոքների ի հայտ գալուն, թե ինքնուրույն է գնահատում իրավիճակը:
- Գրեթե բոլոր լիազոր մարմինները ընդունում են բողոքներ, բայց արդյո՞ք տվյալ լիազոր մարմինը օժտված է օրենքի խախտման դեպքերը հայտնա-

բերելու, ստուգումներ իրականացնելու լիազորությամբ: Գործնականում ինչ հաճախականությամբ է օգտագործվում այս լիազորությունը:

- Ո՞վ է իրավասու բողոք ներկայացնել:
- Բողոքի ներկայացման ինչ գործընթացներ են գործում: Արդյո՞ք այդ մեխանիզմները բավականաչափ պարզ ու արդյունավետ են:
- Արդյո՞ք լիազոր մարմինը ձեռք է բերել փաստեր՝ օրենքի հասցեատերերի կողմից, պետական պաշտոնյաների ուղղորդմամբ, օրենքի պահանջները կատարելու դեպքերի վերաբերյալ: Կազմակերպվել են հանրային լուսմաներ, թե՛ ոչ: Պատասխանվել են օրենքի կիրառումից տուժած, հատկապես խոցելի կամ անապահով խավի հարցերին:

V. Որոշումների կայացում և բողոքարկում

- Արդյո՞ք լիազոր մարմինն ունի որոշում կայացնող միավոր, կողմերի ինչ հարաբերակցությամբ են ընդունվում ներկայացվող առաջարկությունները: Արդյո՞ք այդ մարմինը պարտավոր է հանդիպումներ կազմակերպել և քննարկել խնդիրները, թե՛ յուրաքանչյուրն առանձին է ներկայացնում իր տեսակետը:
- Արդյո՞ք որոշում կայացնողները պետք է գրավոր համաձայնեցնեն որոշումները: Արդյո՞ք պետք է որոշումները ներառեն համապատասխան փաստեր ու հիմնավորումներ: Ինչպե՞ս է այն գործնականում կիրառվել:
- Արդյո՞ք որոշում կայացնողները պետք է տեղեկացնեն շահագրգիռ կողմերին և հրավիրվեն համապատասխան խնդրի վերաբերյալ որոշում կայացնելիս: Ինչպե՞ս է այն գործնականում կիրառվել:
- Արդյո՞ք գոյություն ունի բողոքարկող մարմին, որին կարող է դիմել լիազոր մարմնի կայացրած որոշումից տուժած անձը:
- Որքան հաճախ է բողոքարկվել գործունեության տվյալ ոլորտը:
- Որքան արդյունավետ է բողոքարկման գործընթացը: Քանի՞ որոշում է փոփոխվել բողոքարկման արդյունքում:

Քայլ 8. Համապատասխան շահագրգիռ անձանց շրջանակի որոշումը

Համապատասխան շահագրգիռ անձանց շրջանակի որոշումը ՀՕՎ-ի

կարևորագույն քայլերից մեկն է: Շահագրգիռ անձ կարող են լինել բոլոր նրանք, ովքեր տիրապետում կամ կարող են տրամադրել օրենքի կիրառման վերաբերյալ տեղեկատվությանը,

ինչպես նաև նրանք, ովքեր կրում են օրենքի կիրառման ազդեցությունը:

ՀՕՎ-ի հետազոտությունով կարելի է գնահատել հետևյալ հարցերի պատասխանները.

- ի՞նչ սոցիալական խմբերի վրա է ազդում օրենքը,
- որքանով են խոշոր այս խմբերը,
- ի՞նչ բնույթի են յուրաքանչյուր խմբի վրա օրենքի կիրառման ազդեցությունները,
- որքանով են կարևոր այս ազդեցությունները,
- որքան երկար կտևի այս ազդեցությունը:

Շահագրգիռ անձանց թվում կարող են լինել փորձագետներ և մասնագետներ, որոնք օրենքի վերաբերյալ ներկայացրել են առաջարկություններ, գիտնականներ և ոլորտի պրոֆեսիոնալներ, շահագրգիռ մարմինների ներկայացուցիչներ, կազմակերպությունների ներկայացուցիչներ, մասնագիտական կառույցներ և անհատներ և բոլոր այլ անձինք, որոնք կարող են նպաստել ՀՕՎ-ի արդյունավետ իրականացմանը: Շահագրգիռ անձանց ընտրությունը կարևոր է այնքանով, որ ՀՕՎ իրականացնող խորհրդարանական Հանձնաժողովը

կամ մարմինը կարողանա երաշխավորված լինել, որ օրենքի ազդեցության ամբողջական պատկերը ներկայացված է:

Խորհրդարանը ևս պետք է համոզված լինի, որ շահագրգիռ անձանց շրջանակը ամբողջապես ներկայացված է: Ընտրության պրոցեսը կարելի է հեշտացնել ի սկզբանե պատասխանելով հետևյալ հարցերին.

- ի՞նչ է շահագրգռված օրենքով,
- օրենքի կիրառման արդյունքում ովքեր են պոտենցիալ ազդեցության ենթարկվողները, թե՛ դրական և թե՛ բացասական առումով,
- ո՞ւմ աջակցությունն է էական օրենքի կամ վարվող քաղաքականության հաջողության համար:

Եթե նույնիսկ կա ենթադրյալ շահագրգիռ անձանց ցանկի նախագիծ, Հանձնաժողովն ամբողջ կազմով կրում է պատասխանատվություն շահագրգիռ անձանց շրջանակի ընտրության հարցում:

Շահագրգիռ անձիք կարող են հրավիրվել հանրային լուսնաբերի կամ ՀՕՎ իրականացնող խորհրդարանական Հանձնաժողովի կամ մարմնի կողմից կազմակերպած քննարկումներին մասնակցելու: Ցանկացած նախնական հրավիրյալների ցանկի նախագիծ

պետք է հաստատվի վերոնշյալ կառույցի կողմից:

Խորհրդակցությանը կամ հանրային լսումներին ներկա կամ շահագրգիռ անձանց ընտրության համար կարևոր է համոզվել, որ փոքրամասնության տեսակետը ներկայացնողները ընդգրկված են, հատկապես երբ քննարկվող հարցերն այդ խմբերի ապրուստի միջոցների և բարեկեցության վրա կարող են ունենալ ուղղակի ազդեցություն կամ այդ խմբերն են հանդիսանում օրենքի կիրառան ազդեցության կրողը:

Գենդերային հավասարության վրա ևս պետք է ուշադրություն դարձնել ներկաների ցանկը որոշելիս: Շատ կարևոր է տարբեր սեռերի բալանսավորված ներկայացվածության հնարավորինս ապահովումը, որպեսզի համոզմունք ձևավորվի, որ բոլոր հնարավոր տեսակետները ներկայացված են: Այդ պարագայում արդյունքները կլինեն էլ ավելի հավաստի: Հեռուստատեսությամբ կամ ուղիղ հեռարձակման ժամանակ կանանց և տղամարդկանց հավասար կամ ոչ հավասար ներկայացվածությամբ ձևավորվում է հանրության՝ Խորհրդարանի վերաբերյալ համապատասխան կարծիք: Որոշ երկրներում միայն տղամարդ ներկայացուցիչներով քննարկումները արտացոլում են գոյություն ունեցող պրակտիկան և համապատասխան վարքագծի դրսևորումը, որով խոչըն-

դոտվում է կանանց՝ ժողովրդավարական գործընթացներին ամբողջական ներկայացվածությունը:

Գենդերային տարրի ներառումը ՀՕԿ մեջ ոչ միայն գործընթացի օբյեկտիվության ապահովման, այլ դրանում երկու սեռերի հավասար ներգրավվածության ապահովման համար է: ՀՕԿ-ում գենդերային հավասարությունը հաստատելուն միտված գործողությունները հաճախ անավարտ են մնում, կամ ոչ միշտ է պատշաճ կերպով իրականացվում, քանի որ, որոշ դեպքերում, առկա է լինում բնակչության ցածր ներկայացվածություն ունեցող կեսի ակնկալիքների բացակայություն:

Աժ աշխատակազմի գործողությունները

- Կազմել համապատասխան շահագրգիռ անձանց, օրենքի որոշ դրույթների ազդեցությունը կրող անձանց թե՛ անհատներին և թե՛ խմբերը ներառող ցանկ:
- Պատրաստել ՀՕԿ իրականացնող մարմնի նախագահի և անդամների քննարկման համար այն ընտրված շահառուների կազմը, որոնք կարող են հրավիրվել այդ մարմնի կողմից կազմակերպվելիք հանրային լսումներին:

Քայլ 9. Հավաքել բազային տեղեկատվություն և համապատասխան տվյալներ

Համապատասխան տեղեկատվության և տվյալների հավաքագրումը ՀՕՎ-ի պլանավորման հաջորդ կարևորագույն քայլերից մեկն է:

Կարող է հավաքագրվել երկու տեսակի տեղեկատվություն՝ առաջնային և երկրորդային: Առաջնային տեղեկատվությունը կարող է գեներացվել ուղակիորեն ՀՕՎ-ի թիմի կողմից, իսկ երկրորդային տեղեկատվությունը հավաքագրվում է այլ անձանց կամ կազմակերպությունների կողմից, բայց օգտագործվում է ՀՕՎ-ի թիմի կողմից: Խորհուրդ է տրվում սկսել առաջնային տվյալների հավաքագրումն այն ժամանակ, երբ երկրորդային տվյալների հավաքագրման աղբյուրներն ամբողջովին սպառվել են, քանի որ երկրորդային տվյալների հավաքագրումը ժամանակի և ռեսուրսների ավելի խնայողատար գործընթաց է: Առաջնային տեղեկատվության օգտագործման առավելությունը տեղեկատվության օրիգինալությունն է: Իդեալական է, երբ ՀՕՎ-ն օգտագործում է տվյալների հավաքագրման երկու մոտեցումները միաժամանակ: Կախված ուսումնասիրվող օրենքի նախագծի բովանդակությունից, բավականաչափ տեղեկատվություն կարող է հասանելի լինել: Տեղեկատվության աղբյուրներ կարող են հանդիսանալ.

- վիճակագրական տեղեկագրերը,
- գիտական հետազոտությունները,
- սոցիոլոգիական հարցումների արդյունքները,
- պետական հիմնարկների պաշտոնապես հրապարակված հատուկ ոլորտային զեկույցները,
- նորություններ կամ քննչական հաշվետվությունները,
- ՏԻՄ հաշվետվությունները,
- անկախ միջազգային կազմակերպությունների կամ ՀԿ-երի հրապարակած զեկույցները,
- պետության կողմից միջազգային պայմանագրերով, կոնվենցիաներով ստանձնած պարտավորությունների կատարման վերաբերյալ (մարդու իրավունքներ ևն) զեկույցները,
- քաղաքացիական հասարակության կողմից կազմված, պետության կողմից հրապարակված զեկույցների, այլընտրանքային զեկույցները,
- Պետության վերաբերյալ գլոբալ կամ տարածաշրջանային կազմակերպությունների (օրինակ, ԱՀԿ, ՄԱԿ, ՅՈՒՆԵՍԿՕ,

Համաշխարհային բանկ, Ասիական զարգացման բանկ և այլն) տվյալ թեմայով զեկույցները:

Քանակական և որակական տեղեկատվությունը փոխլրացնում են միմյանց: Քանակական տեղեկատվությունը կարող է տրամադրել բնակչության ներկայացուցչական ընտրանք, որը կօգնի բացահայտել սոցիալական, տնտեսական կամ քաղաքական զարգացման միտումներն ու հակումները: Այսպիսի տեղեկատվությունը բնականաբար քանակապես է ներկայացվում: Որակական տեղեկատվությունը նկարագրում է մարդկանց տեսակետներն ու փորձառությունը, որը կարող է օգտակար աղբյուր հանդիսանալ որոշակի վարքագծի փոփոխությունների վերաբերյալ ինֆորմացիան մշակելիս: Կարևոր է, որ հարցազույցների ժամանակ գնահատող թիմը վստահ լինի, որ հարցվողից ճշտել է ՀՕՎ-ի թեմայի վերաբերյալ նրանց տեսակետները, տվյալ ոլորտում ինչ փոփոխություններ կցանկանան, որ իրականացվի, ինչպես կցանկանան բարելավել ոլորտը և ինչպես են պատկերացնում առաջարկվող փոփոխությունների իրականացումը:

Տվյալների հավաքագրման պլանավորման 10 նկատարում

1. Ինչ բազային տեղեկատվություն է անհրաժեշտ հավաքել, որպեսզի տվյալ քաղաքականությո-

յան նպատակների հավաստի և հետևողական գնահատում իրականացվի: Ո՞ր տվյալներն է անհրաժեշտ ասանձնացնել ըստ սեռի, տարիքի, կրթվածության մակարդակի, գտնվելու վայրի ևն:

2. Ինչ լրացուցիչ տեղեկատվություն է անհրաժեշտ պլանավորված մոնիտորինգի օժանդակեման համար:
3. Ո՞ր տեղեկատվությունն է անհրաժեշտ գրավոր ներկայացնել, ի՞նչ՝ բանավոր:
4. Որո՞նք են հավաքված տվյալների որակական ցուցանիշները:
5. Ո՞ր հաստատությունները պետք է ընդգրկված լինեն առաջնային տեղեկատվության հավաքագրման և վերլուծության իրականացմանը:
6. Ո՞րն է տեղեկատվության հավաքագրման և վերլուծության իրականացման ժամանակացույցը:
7. Ո՞վ է տեղեկատվության հավաքագրման պատասխանատուն:
8. Ինչպես է ապահովվելու տեղեկատվության որակը և հավաքագրման անխզելիությունը:
9. Ինչ թեմայով լրումներ է անհրաժեշտ կազմակերպել և ովքեր պետք է ներկայացված լինեն

(Կառավարություն, պետական կառավարման մարմիններ, քաղաքացիական հասարակություն, տուժածներ, վկաներ ևն):

10. Տվյալների հավաքագրման համար արդյո՞ք դաշտային այցելություններին անհրաժեշտություն կա:

Խորհրդարանը կարող է մշակել տվյալների հավաքագրման մեթոդաբան. օրինակ՝ 1) հարցազրույցներ շահագրգիռ անձանց հետ, կամ ընդլայնված, խորքային հարցազրույցներ, որը կարող է իրականացվել նախապես սահմանված հարցերի շուրջ առերես հանդիպումների կամ հեռախոսային հարցումների ձևաչափով, 2) ֆոկուս խմբեր կամ աշխատանքային խմբեր, 3) մասնակիցների դիտարկումներ, 4) նախապես մշակված սցենարով քննարկում և խորհրդատվություն 5) քանակական հարցումներ: Հարցերը կարող են լինել փակ և բաց, մեկ պատասխանի կամ բազմակի պատասխաններ ընտրելու հնարավորությամբ:

Տվյալների հավաքման մեթոդների բազմազանության առկայությունը դրական է և չարժե այդ հարցում ձգտել հասնել կոնսենսուսի: Բազմաթիվ մեթոդների օգտագործումը (triangulation) մեծացնում է տվյալների վերաբերյալ եղած հավաստիության աստիճանը: Տվյալների վերաբերյալ տարբեր մեկնաբանությունները կարող են ներառվել ՀՕՎ-ի զեկույց(ներ)ում:

Աժ աշխատակազմի գործողությունները

- Մշակել տվյալների հավաքագրման պլան՝ նկարագրելով թե՛ ՀՕՎ-ի հետազոտության ընթացքում համապատասխան տեղեկատվությունն ինչպե՞ս, ու՞մ կողմից պետք է հավաքագրվի և գնահատվի, ո՞ր կազմակերպությունները պետք է ընդգրկվեն, ի՞նչ հանրային լսում պետք է կազմակերպվի և ի՞նչ դաշտային այցելություն է պահանջվում իրականացնել տվյալների հավաքագրման և արդյունքների հավաստիության մեջ համոզվելու համար:
- Կազմել միջանկյալ զեկույց հավաքված տվյալների վերաբերյալ քանի դեռ ՀՕՎ -ն ընթացքի մեջ է:

Քայլ 10. ՀՕՎ-ի ժամանակացույցի կազմումը

Ժամանակացույցի կազմումը կախված է մի քանի գործոններից՝ նպատակների համալիր բնույթից, գնահատման ծավալից և շրջանակներից, գնահատման կազմակերպումից, Հանձնաժողովի հանդիպումների կազմակերպման հաճախակիությունից, Հանձնաժողովի աշխատանքային գրաֆիկից, ՀՕՎ-ի ռեսուրսներից, վերլուծության որակից, փորձագետներից և այլն:

Իդեալական է, որ ամբողջ գործընթացը տևի 3-6 ամիս:

Աժ աշխատակազմի գործողությունները

- Մշակել և Հանձնաժողովի նախագահին ներկայացնել ՀՕՎ-ի իրականացման իրատեսական ժամա-

նակացույցի նախագիծ, որը պետք է ներառի գործընթացի յուրաքանչյուր փուլի առանցքային կետերը:

Հանձնաժողովի նախագահի գործողությունը

- Հաստատել ՀՕՎ-ի իրականացման ժամանակացույցը:


ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՓՈՒԼ

ՀՕՎ-ի իրականացման փուլը սկսելիս պետք է ակնկալել.

- խորհրդատվություն շահագրգիռ անձանց և օրենքը կիրառող մարմինների հետ,

- ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերով սահմանված մեխանիզմների ուսումնասիրություն,

ՀՕՎ-ի իրականացման էտապները



- աշխատանք ՋԼՄ-երի հետ և տեղեկատվական արշավի կազմակերպում,
- ՀՕԿ-ի հետազոտության արդյունքների վերլուծություն,
- զեկույցի նախագծի կազմում:

Վերը նշված խնդիրները դիտարկվում են որպես ՀՕԿ-ի իրականացման փուլի բաղկացուցիչ մասեր:

Քայլ 11. Օրենքը կիրառող մարմնի և շահագրգիռ անձանց հետ խորհրդատվության անցկացում

Շահագրգիռ անձանց հետ խորհրդատվության կազմակերպումը ՀՕԿ-ի կարևորագույն էտապներից մեկն է: Շահագրգիռ անձանց հետ խորհրդատվությունը պատգամավորներին, ԱԺ աշխատակազմին, հրավիրյալ փորձագետներին, հետաքրքրված անձանց, հասարակությանը հնարավորություն է տալիս հետազոտել և պարզաբանել համապատասխան օրենքի կամ օրենքների փաթեթի իրականացման վիճակը: Այսպիսի խորհրդատվությունները թույլ են տալիս պատգամավորներին որոշել թե ի՞նչ միջոցներ է անհրաժեշտ որոշակի օրենքների կիրառումը բարելավելու կամ օրենքի կիրառումն ապահովող համապատասխան մարմնի գործունեության արդյունավե-

տությունը բարձրացնելու համար: Շահագրգիռ անձանց հետ քննարկումների շնորհիվ պատգամավորները և Խորհրդարանը տեղեկացվում են նաև օրենքի և դրանով պայմանավորված համապատասխան քաղաքականության իրականացմանը պետական մասնակցության իրական չափի վերաբերյալ:

Որպես ՀՕԿ-ի բաղկացուցիչ մաս, գոյություն ունեն շահագրգիռ անձանց և օրենքը կիրառող մարմնի հետ խորհրդատվությունների կազմակերպման մի քանի ձևեր՝ հանրային լուսմներ, անհատական կամ խորհրդատվական բնույթի հանդիպումներ, գրավոր ապացույցների և բանավոր վկայությունների հավաքագրում: Խորհրդարանը կարող է օգտագործել մեկ կամ մի քանի տարբերակների համադրություն:

Երբ ուսումնասիրվում է հասարակության համար որոշակիորեն զգայուն կամ բարդություն ներկայացնող խնդիրներ (օրինակ. Ընտանեկան բռնություն, վաղ ամուսնություն), խորհրդարանը՝ հանրային լուսմների ձևաչափը կազմավորելիս, պետք է աշախուրջ լինի բոլոր վկաների և շահագրգիռ անձանց անձնական տվյալների պահպանության, դրանց նույնականացման, արժանապատվության հետ կապված խնդիրներին առնչվող հարցերին: Երբ խորհրդատվություններին ներգրավվում են նշված

պայմաններում հայտնված, կամ դրանցից փրկված անձիք, ապա՝ խորհրդարանը պատասխանատվություն է կրում նրանց անվտանգությունն ապահովելու հարցում: Խորհրդատվության գործընթացը պետք է հարմարեցվի վերը նշածին, քանի որ առաջնայինը քաղաքացիների անվտանգությունն է:

Շահագրգիռ անձանց հետ խորհրդատվության հիմնական սկզբունքներն ու նվազագույն ստանդարտները

Շահագրգիռ անձանց հետ հարաբերությունները ղեկավարվում են հետևյալ սկզբունքներով. թափանցիկություն և հաշվետվողականություն, ներդաշնակություն, արդյունավետություն և մասնակցության ապահովում:

Գոյություն ունեն հինգ նվազագույն ստանդարտներ, որոնք պետք է հաշվի առնել խորհրդատվություններն անցկացնելիս.

1. Խորհրդատվության գործընթացի բովանդակության հստակություն

Քննարկման բոլոր փաստաթղթերը, հաղորդակցման ձևերը պետք է լինեն պարզ, հակիրճ և պարունակեն բոլոր այն տեղեկատվությունը, որը կոյուրացնի հարցերին պատասխանելու պրոցեսը:

2. Խորհրդատվություն թիրախ խմբերի հետ

Խորհրդատվության համար թիրախ խումբը կամ խմբերը որոշելիս խորհրդարանը կամ ՀՈՎԻՄ-ը պետք է համոզված լինի, որ բոլոր համապատասխան խմբերը հնարավորություն ունեն ներկայացնել իրենց տեսակետները:

3. Հրապարակայնություն

Խորհրդարանը կամ ՀՈՎԻՄ-ը պետք է համոզված լինի լուսմենրի հրապարակայնության ապահովման հարցում և օգտագործի հաղորդակցման բոլոր հնարավոր ուղիները յուրաքանչյուր թիրախ խմբի տեղեկացվածությունն ապահովելու համար:

4. Ժամանակի սահմանափակում

Խորհրդարանը կամ ՀՈՎԻՄ-ը պետք է բավարար ժամանակ տրամադրի պլանավորելու և հրավերներին արծագանքելու կամ խորհրդատվությանը գրավոր տեքստով աջակցություն ցուցաբերելու համար:

5. Հետադարձ կապի հաստատում

Խորհրդատվության արդյունքում ստացված տեղեկատվություն-

նը պետք է վերլուծել և ընդգրկել
ՀՕՎ-ի զեկույցում:

ՀՕՎ-ի շահագրգիռ անձանց հետ խորհրդատվության հաջողությունը մեծապես կախված է նրանում ներառված անձանց՝ ՀՕՎ-ին օժանդակելու որակից: Կարևոր է, որ հանրային քննարկմանն ընդգրկելուց առաջ շահագրգիռ անձիք նախօրոք ՀՕՎԻՄ-ի անդամներին տրամադրեն համապատասխան գրավոր ապացույց օրենքի կիրառման շնորհիվ որոշակի հետևանքների վերաբերյալ (բռնության ենթարկված լինելու, աղետներից տուժելու և այլն): Հանդիպման ժամանակ սովորաբար հրավիրյալները հանդես են գալիս բացման խոսքով, ելնելով նախօրոք տրամադրված հակիրճ ակնարկից: Այնուհետև, հրավիրյալը պատասխանում է Հանձնաժողովի անդամների հարցերին, մինչև մյուս հրավիրյալը կներկայացնի իր փաստերը: ՀՕՎԻՄ-ը խորհրդատվությունն սկսելուց առաջ պետք է որոշի ելույթ ունեցողների փաստերի ներկայացման ձևաչափը: Քաղաքացիների, գիտնականների, կրթական հաստատությունների, փորձագետների արդյունաբերական հիմնարկների, ՀԿ-երի ներկայացուցիչների և այլ քաղաքացիների տեսակետները պետք է ներկայացվեն այնպիսի հերթականությամբ, որպեսզի ակնկալվող տեղեկատվությունը տրամադրվի տրամաբանական, հետևողական և պրոգրեսիվ կարգով: Օրինակ, ՀՕՎԻՄ-ը կարող է ելույթների հերթա-

կանությունը դասավորի այնպես, որ նախորդի տրամադրած տեղեկատվությունը մարտահրավեր լինի հաջորդի համար կամ այն լրացնի հաջորդին:

Այստեղ պետք է ցուցաբերել զգուշավորություն: Երբեմն նախորդի ներածմարտահրավերը կարող է զսպիչ հանգամանք լինել հաջորդի համար՝ տրամադրելու նախապեսված տեղեկատվությունը:

Նախարարության ներկայացուցիչներին խորհրդատվություններին մասնակից դարձնելու համար սովորաբար նախապես ուղարկվում են հրավերներ: Հստակություն մտցնելու և համապատասխան ներկայացուցչին ընտրելու ժամանակ տրամադրելու համար անհրաժեշտ է հրավերն ուղարկել խորհրդատվությունը կազմակերպելուց առնվազն հինգ օր առաջ:

Գրավոր ապացույցների հավաքագրում

Գրավոր ապացույցները պետք է ընդունվեն նախօրոք (օր. 10 օր առաջ), որպեսզի ՀՕՎԻՄ-ի անդամները նախապես հնարավորություն ունենան կարդալ և ուսումնասիրել մինչև սովյալ շահառուին խորհրդատվության հրավիրելը: Մինչև հրավիրյալ անձի արտահայտվելը ՀՕՎԻՄ-ի անդամները պետք է նշեն արդյո՞ք իրենց փորձագետները ստացել են գրավոր ներկայացվող նյութի սեղմագիրը:

Չկան գրավոր սեղմագրերի կազմման հատուկ կանոններ: Օգտակար է համարվում, երբ գրավոր սեղմագիրը ներառում է.


- տեղեկատվություն տրամադրող կազմակերպության կամ անձի անվանումը և հասցեն,
- տեղեկատվություն ներկայացնող անձի կամ կազմակերպության գործունեության վերաբերյալ համառոտ նկարագրությունը՝ սկսած իրենց գործունեության ոլորտից,
- որևէ այլ տեղեկատվություն, որը Հանձնաժողովի անդամներին հնարավորություն կտա օրենքի

կիրառման վերաբերյալ համապատասխան եզրակացություն անել կամ հնարավոր կլինի օգտագործել այլ շահագրգիռ անձանց տրամադրած տեղեկատվությունն ամբողջականացնելու համար:

Օգտակար է նաև սեղմագրում ընդգրկել կառավարության կամ օրենքը կիրառող այլ անձանց գործողությունների վերաբերյալ առաջարկություններ, որոնք տեղեկատվություն տրամադրողը կցանկանար, որ Հանձնաժողովը քննարկեր:

Եթե գրավոր սեղմագիրը շատ համառոտ է, ապա այն կարող է ուղարկվել նամակի տեսքով, այլ դեպքերում

Խորհրդարանում ՀՕՎ-ի շահառուները



ցանկալի է, որ այն ունենա հուշագրի տեսք: Եթե հուշագիրը ծավալուն է, այն պետք է ունենա մեկ էջի սահմանում ամփոփագիր հիմնական կետերի վերաբերյալ և եթե հնարավոր է առանձնացվի «բովանդակություն» բաժինը:

Սեղմագրի ներկայացման ցանկալի տարբերակը ՀՕՎԻՄ-ի ինտերնետային էջում նշված էլեկտրոնային փոստի հասցեների միջոցով ներկայացնելն է:

Նախընտրելի է ուղարկել ՀՕՎԻՄ-ի նախագահին կամ խորհրդատվության վերաբերյալ հայտարարության կամ մամլո հաղորդագրության մեջ նշված հասցեին:

Բացի գրավոր ապացույցներից, հրավիրվողը կարող է տրամադրել որևէ այլ տեղեկատվություն, որը նա համարում է, որ կարող է օգտակար լինել ՀՕՎ-ի պրոցեսին:

Ուղեցույց տեղեկատվության գրավոր ներկայացման համար

ՀՕՎԻՄ-ի աշխատակազմը պետք է շահագրգիռ անձանց տրամադրի ներկայացվող գրավոր տեղեկատվության վերաբերյալ Ուղեցույցը, այսպես.

- փաստական տվյալներ ներկայացվող տեղեկատվության վերաբերյալ,
- եզրակացությունը պետք է լինի որքան հնարավոր է հստակ, կոնկրետ,
- տեղեկատվություն ներկայացնող կազմակերպության կամ անձի անունը և հասցեն պետք է լինեն ներկայացվող գրավոր նյութի առաջին էջի վրա,
- բոլոր ներկայացված գրավոր նյութերը պետք է ունենան ամփոփագրեր,
- ցանկացած գրաֆիկ կամ դիագրամ ներառելու դեպքում պետք է այն ներկայացվի սև գունավորմամբ, որպեսզի հնարավոր լինի ֆոտոպատճենել,
- կազմակերպության անունից ստորագրած անձիք պետք է նշեն նաև իրենց պաշտոնը,
- օգտակար է ներկայացնել միաժամանակ էլեկտրոնային և թղթային տարբերակներով,
- ներկայացման հանրայնացումն իրականացվում է ՀՕՎԻՄ-ի հայեցողությամբ,
- տեղեկատվությունը, որը արդեն իսկ հրապարակվել է, չպետք է ներկայացվի որպես բազային տեղեկատվություն, այլ՝ կարող է հղում արվել սեղմագրում կամ կցվել որպես լրացուցիչ փաստաթուղթ,

- վկայություն ներկայացնողները պետք է զգույշ լինեն չմեկնաբանել կամ հրապարակել այն տեղեկատվությունը, որով դատական վարույթ է ընթանում և որից վարույթի ընթացքը կարող է կախված լինել:

Ինչ է տեղի ունենում ներկայացված գրավոր տեղեկատվության հետ.

1. ՀՕՎԽՄ-ն իր ինտերնետային էջում հրապարակում է ստացված գրավոր տեղեկատվության մեծ մասը,
2. Եթե որևէ մեկը չի ցանկանում, որ իր տրամադրած տեղեկատվությունը հրապարակվի, ապա հստակ նշում է և բացատրում չհրապարակելու, ներկայացված տեղեկատվության չբացահայտելու պատճառները: ՀՕՎԽՄ-ը տեղեկատվությունը հրապարակելու մասին որոշում կայացնելիս հաշվի է առնում վերը նշված պատճառները,
3. ՀՕՎԽՄ-ը պարտավոր չէ ընդունել ներկայացված գրավոր նյութը որպես վկայություն, ոչ էլ՝ հրապարակել ստացված ամբողջ նյութը կամ նրա մեջ ներառված որևէ այլ նյութ, որն ընդունվել է որպես ապացույց: Սա կարող է տեղի ունենալ, երբ ներկայացվող նյութը ծավալուն է կամ պարունակում է նյութեր, որոնք խորհրդարանական քննարկման համար նպատակահարմար չէ:

Բանավոր ապացույցների հավաքագրում

ՀՕՎ-ը երբեմն տեղեկատվություն տրամադրողներին (շահառուներին) առաջարկում է հակիրճ ներկայացնել իրենց կենսագրությունը: Շահառուն պետք է ներկայացնի անունը, եթե հնարավոր է մասնագիտությունը և աշխատավայրի ուղղվածությունը: ՀՕՎԽՄ-ը պետք է շահառուից պահանջի սահմանափակվել ապացույցների հնարավորինս հակիրճ ներկայացմամբ: Ժամանակը խնայելու համար, եթե գրավոր վկայություններն արդեն իսկ ներկայացված և ՀՕՎԽՄ-ի կողմից նախօրոք ուսումնասիրվել է, ապա կրկին ամբողջը բանավոր ներկայացնելու անհրաժեշտություն չկա:

Սովորաբար պրեզենտացիայի համար տրվում է 5-10 րոպե ժամանակ: Որոշ դեպքերում նախագահողը կարող է սահմանափակել կամ անհրաժեշտության դեպքում երկարացնել ելույթի տևողությունը:

Քանի որ ՀՕՎԽՄ-ի համար բանավոր ապացույցներ վերցնելու ժամանակը սահմանափակ է, ապա՝ հրավիրյալներին խորհուրդ է տրվում նախապես ներկայացնել տրամադրվելիք տեղեկատվության գրավոր տեքստը: Սա

հնարավորություն է տալիս բանավոր ապացույցների հավաքագրման ժամանակ բարձրացնել քննարկումների արդյունավետությունը, քանի որ այդ դեպքում ՀՕՎԻՄ-ն արդեն իսկ ձեռքի տակ ունենում է տվյալ տեղեկատվությունը և, շահառուի չներկայանալու կամ չհրավիրվելու դեպքում, տրված տեղեկատվությունը դեռևս կարող է օգտագործվել:

Տեղեկատվություն տրամադրողին հարցերով դիմելը

Լսումների ժամանակ հարց և պատասխանը սկսվում է տեղեկատվություն տրամադրողի ելույթից հետո: ՀՕՎԻՄ-ի անդամները օգտագործում են այս ժամանակը հարցեր տալու և լրացուցիչ տեղեկատվություն ստանալու նպատակով, որը կարող է օգտակար լինել հետագայում ՀՕՎԻՄ-ի կողմից հետագա գործողությունների կամ կայացվելիք որոշումների համար: ՀՕՎԻՄ-ի նախագահը կարող է նախագահողին կամ ՀՕՎԻՄ-ի անդամներին առաջարկել նախօրոք պատրաստել ելույթ ունեցողին տրվելիք հարցերը: Որոշ դեպքերում տրվելիք հարցերի ուղղվածությունը կարող է նախապես որոշվել և քննարկվել վկայի հետ մինչև լսումների սկսելը:

ՀՕՎԻՄ-ը կարող է տեղեկատվություն տրամադրողին վերջիններիս անձնական օգտագործման համար

տրամադրել այլոց կողմից տրամադրված չխմբագրված նյութերը: ՀՕՎԻՄ-ը պետք է նախօրոք տեղեկատվություն տվողին տեղեկացնի իր կողմից նախնական հետազոտություն իրականացնելու կամ որոշակի տեղեկատվության հավաքագրման կամ հավելյալ տեսակետների առկայություն պահանջվող հարցերի մասին: Եթե անձը չի կարող միանգամից տրամադրել այս տեղեկատվությունը, ապա՝ ՀՕՎԻՄ-ը կարող է առաջարկել անհրաժեշտ տեղեկատվությունը հետագայում տրամադրել գրավոր տեսքով:

Աժ աշխատակազմի գործողությունները

- Խորհրդատվությանը կամ հանրային լսումներին հրավիրել ՀՕՎԻՄ-ի կողմից որոշված շահագրգիռ անձանց, փորձագետների և օրենքը իրականացնող իրավասու մարմինների ներկայացուցիչների:
- ՀՕՎԻՄ-ի հետ խորհրդակցելով՝ որոշել խորհրդատվության լավագույն ձևաչափը (հանրային լսումներ, գրավոր ապացույցներ և այլն):
- Նախապատրաստել ՀՕՎԻՄ-ի հետ հանդիպումների և խորհրդատվությունների անցկացման գրաֆիկ:

- Հիմնվելով գրավոր վկայությունների հավաքագրման վերաբերյալ ուղեցույցի պահանջներից նախօրոք դիմել ՀՕՎԻՄ-ի կողմից որոշված շահագրգիռ անձանց գրավոր վկայությունների հավաքագրման համար:
- Նախապատրաստել ՀՕՎԻՄ-ի համար հանրային լուսմների կամ խորհրդատվությունների ժամանակ բարձրացվելիք հարցերի և խնդիրների վերաբերյալ նախագիծ:

ՀՕՎԻՄ-ի կամ պատգամավորների գործողությունը

Անցկացնել ՀՕՎ-ի համար պահանջվելիք հանրային լուսմներ և հարցերով դիմել տեղեկատվություն տրամադրողներին:

Քայլ 12. Ուսումնասիրել ենթաօրենսդրական իրավական ակտերով սահմանված մեխանիզմների ազդեցությունները

Երբեմն օրենքով նախատեսված քաղաքականության ցանկալի նպատակներին հասնելու համար անհրաժեշտ է համապատասխան պաշտոնյաներին ուղղորդել, որ իրենց հայեցողությամբ՝ օրենքով սահմանված կարգավորումների շրջանակնե-

րում, իրականացնեն օրենքի կիրառման համար անհրաժեշտ համալիր, դինամիկ և բազմակողմանի լուծումներ: Հետևաբար, խորհրդարանի կողմից ընդունված իրավական ակտով հաճախ գործադիր մարմինը լիազորվում է ընդունել ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր: Չնայած, շատ հաճախ, ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը պատշաճ ձևով չեն հրապարակվում կամ զեկուցվում Խորհրդարանին, ինչպես որոշված է եղել օրենքի նախագծի խորհրդարանական բանավեճերի ժամանակ:

ՀՕՎ-ի հետազոտման համար իդեալական է, երբ իրավական ակտն ուժի մեջ մտնելուց հետո նրա կիրառման արդյունավետությունն ուսումնասիրելու հետ միաժամանակ հետազոտվի նաև մայր օրենքից բխող ենթաօրենսդրական իրավական ակտը, դրա(նց) կիրառումը: Սա հատկապես, ցանկալի է իրականացնել այն դեպքերում, երբ օրենքի որոշակի դրույթների ազդեցությունն ավելի շատ պայմանավորված է ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտով, քան առաջնային օրենսդրության դրույթներով: Այս դեպքում պահանջվում է ՀՕՎ-ի իրականացման հատուկ մոտեցում, երբ օրենքով լիազորվում է պետական կառավարման մարմին կամ մասնավոր անձանց ընդունել և կիրառել համապատասխան կանոններ (կանոնակարգեր, ենթաօրենսդրական

նորմատիվ իրավական ակտեր), որոնք սահմանում են շահագրգիռ կողմերի ցանկալի գործողությունները:

Որպես ՀՕԿ-ի արդյունավետ իրականացման կարևոր հանգամանք, կարելի է գնահատել՝ արդյո՞ք ենթաօրենսդրական և հիմնական օրենսդրական նորմատիվ իրավական ակտերով նախատեսված է խնդիրների պատշաճ և բալանսավորված կարգավորում, հետևաբար, արդյո՞ք գործադիրի կողմից սահմանված խնդիրների և լիազոր մարմնի կողմից որոշվող խնդիրների ճիշտ բալանսավորում է իրականացվել:

Առաջնային և երկրորդային իրավական ակտերի արդյունավետության ստուգման համար անհրաժեշտ է փնտրել հետևյալ հարցերի պատասխանները.

- Ինչպե՞ս և որքանով ողջամիտ է օրենքի որոշ մասի կիրառումն ապահովելու նպատակով անհրաժեշտ կարգերի մշակման լիազորությունը տրամադրվել համապատասխան մարմնին:
- Արդյո՞ք հայեցողական լիազորությունը պետական պաշտոնյաներին փոխանցվել տվյալ օրենքով սահմանված կարգին համապատասխան:
- Արդյո՞ք պետական լիազոր մարմինը պատվիրակված լիազորությունը օգտագործում է հասարակության

համար, ոչ թե մասնավոր նպատակներով:

- Արդյո՞ք համապատասխան մարմնին պատվիրակված լիազորությունների ծավալը այնքան մեծ է, որ թուլացնում է խորհրդարանի օրենսդիր գործառույթը:

Այսպիսով, ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ընդունում նախատեսող իրավական ակտերը ՀՕԿ-ի ենթարկելիս անհրաժեշտ է միշտ ուշադրություն դարձնել երկու կարևոր խնդրի վրա.

1. Ինչպե՞ս է օրենքով որոշվում ենթաօրենսդրական իրավական ակտի ընդունումը, և
2. Ինչպե՞ս է ենթաօրենսդրական իրավական ակտը համապատասխանում օրինականության և լեգիտիմության սկզբունքներին:

Առաջին հերթին անհրաժեշտ է ուսումնասիրել թե ինչպե՞ս, ի՞նչ ապացույցների հիման վրա և ի՞նչ տրամաբանությամբ է օրենսդիրը որոշում ենթաօրենսդրական իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը: Արդյո՞ք ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի, նոր կանոնների ընդունման և հրապարակման համար նախատեսված պետական լիազոր մարմնի ընտրությունը ճիշտ է կատարված: Ո՞րն է լիազոր մարմնի ընտրության և տվյալ ընթացակարգը սահմա-

նելու ազդեցության մեխանիզմները: Վերը նշված հարցերի պատասխանը գտնելու համար ստորև աղյուսակ 1-ում նշված ստուգման ենթակա հարցերի ցանկը կարող է օգտակար լինել:

Այն արտացոլում է չափորոշիչներ, որոնցով առաջնորդվելով առաջնային օրենսդրությամբ կարելի է սահմանել ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունում:

ՀՕՎ-ի հարցերի ցանկ, որով առաջնորդվելով առաջնային օրենսդրությամբ կարելի է նախատեսել ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունում

- Արդյո՞ք պատշաճ ձևով ապացուցվել է, որ օրենքն արդյունավետորեն անդրադառնում է բոլոր հնարավոր պայմաններում և հանգամանքներում մարդկանց համապատասխան վարքագծին առնչվող խնդիրների լուծմանը: Օրինակ, որոշակի օրենքների դեպքում աշխարհագրական տարբեր պայմանները կարող են հիմք հանդիսանալ ենթաօրենսդրական կամ երկրորդային իրավական տարբեր ակտերի ընդունման համար:
- Արդյո՞ք պատշաճ ձևով ապացուցվել է, որ օրենքը հասցեագրվում է հարավոփոխ այնպիսի սոցիալ-տնտեսական պայմաններին, որից ելնելով հնարավոր չէ նախապես մանրամասն նկարագրել համապատասխան վարքագծի դրսևորումը, որը հիմք է ծառայում հիմնական օրենքով նախատեսել ենթաօրենսդրական կամ երկրորդային իրավական ակտի ընդունում:
- Արդյո՞ք պատշաճ ձևով ապացուցվել է, որ օրենքը կարգավորում է ոչ ամբողջությամբ ուսումնասիրված խնդիրներ, որոնց կարգավորման համար անհրաժեշտ է զուգահեռ իրականացնել ընթացիկ հետազոտություններ և օժտված լինել տարբեր լուծումների փորձարկման համար որոշակի լիազորություններով, որն էլ կարող է հիմք ծառայել նախատեսելու հիմնական օրենքով ենթաօրենսդրական կամ երկրորդային իրավական ակտի ընդունում:
- Ի՞նչ այլընտրանքային ռեժիմներ է հաշվի առել օրենսդիրը տվյալ օրենքով կարգավորվող խնդիրների լուծման համար: Արդյո՞ք պատշաճ հիմքով են արվել համապատասխան դատողությունները:
- Ի՞նչ չափորոշիչներ են սահմանվել տվյալ հիմնախնդրի լուծման նպատակով լիազոր մարմնի կողմից որոշումներ կայացնելու գործընթացի համար: Արդյո՞ք դրանք աշխատում են:
- Արդյո՞ք լիազոր մարմինն ունի համապատասխան ընթացակարգեր, որոնք սահմանափակում կամ խոչընդոտում են պաշտոնատար անձանց կողմից կամայական կանոններ ստեղծելուն կամ պաշտպանում են պաշտոնյաների կողմից կանոններ ստեղծելու հնարավորությունը սեփական

շահերին ծառայեցնելու, սեփական հարստությունը մեծացնելու վտանգից:

- Արդյո՞ք այս ընթացակարգերը և չափորոշիչները հանգեցնում են թափանցիկության, հաշվետվողականության և համապատասխան շահառու անձանց մասնակցության ապահովմանը: Արդյո՞ք այս ընթացակարգերը և չափորոշիչները հանգեցնում են ոչ կամայական, հիմնավոր որոշումների կայացմանը:

Այնուհետև, կարևոր է գնահատել, թե որքանով է ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտը համապատասխանում իրավական և լեգիտիմության սկզբունքներին: Ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի գնահատման չափորոշիչները ստուգելիս ՀՕՎԻՄ-ն ուսումնասիրում է արդյո՞ք որևէ կանոնակարգ կամ կանոնադրական գործիք, ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտ, կարգ.

1. թույլատրված չէ օրենսդրությամբ կամ չի համապատասխանում օրենսդրությանը,
2. չի համապատասխանում ՀՀ Սահմանադրությանը, Հայաստանի կողմից վավերացված միջազգային պայմանագրերի նորմերին,
3. հակված է հետադարձ ուժի ազդեցություն ունենալ, առանց օրենքով սահմանված համապատասխան թույլտվության,
4. սահմանում է գանձումներ կամ վճարման ձևեր, առանց առանց

օրենքով սահմանված համապատասխան թույլտվության,

5. սահմանում է տուգանք, ազատազրկում կամ այլ պատիժ, առանց օրենքով սահմանված համապատասխան թույլտվության,
6. միտում ունի ուղղակիորեն կամ անուղղակիորեն շրջանցել դատարանները, առանց օրենքով սահմանված համապատասխան թույլտվության,
7. չի համապատասխանում «Իրավական ակտերի մասին» օրենքին, մասնավորապես իրավական ակտի փոխանցման, գրանցման և հրապարակման առումով,
8. ի հայտ է եկել օրենքի գերակայությունը խախտելու նպատակով,
9. անարդարացիորեն խախտում է մարդու իրավունքներն ու ազատությունները,
10. մարդու ազատություններն ու իրավունքներն անհարկի կախվածության մեջ է դնում պետական պաշ-

տոնյաների հայեցողությունից կամ չի համապատասխանում բնական արդարադատության կանոններին,

11. հանգեցնում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված լիազորությունների անսովոր կամ անսպասելի օգտագործման,

12. գործադիրի համար նախատեսում է օրենսդիր իշխանության իրականացում, որն ըստ էության հանդիսանում է օրենսդիր մարմնի կարգավորման առարկա, (ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտով նախատեսվում են լիազորություններ, որը չի կարող ունենալ գործադիր իշխանությունը),

13. թերի է նախագծված կամ պահանջում է կիրառման վերաբերյալ լրացուցիչ լուսաբանում:

ԱԺ աշխատակազմի գործողությունները

■ Մշակել և ՀՕՎԻՄ-ի նախագահին ներկայացնել քննարկվող օրենսդրական ակտով առաջնային և երկրորդային օրենսդրության բալանսավորվածության վերաբերյալ վերլուծություն, ելնելով «Առաջնային օրենսդրությունից բխող ենթաօրենսդրական իրավական ակտերի կազմման չափորոշիչ-

ներից» և «Ենթաօրենսդրական իրավական ակտերի լեգալության և լեգիտիմության գնահատման» համար նախատեսված ստուգման ցուցակից:

- Քննարկել վերլուծությունը ՀՕՎԻՄ-ի նախագահի հետ և տրամադրել այն ՀՕՎԻՄ-ի մյուս անդամներին:
- Օրենքով լիազոր մարմնի կողմից կանոնակարգերի ընդունման և համապատասխան որոշում կայացնելու վերաբերյալ առաջարկության ներկայացում և հետագա ուսումնասիրության հարցերի նախագծի կազմում:


Քայլ 13. Խորհրդատվության հանրայնացումը

ՀՕՎ-ի շահագրգիռ անձանց հետ խորհրդատվությունը և հանրային լուսնները պատգամավորների համար օրենքի կիրառման վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման լավագույն ձևերից է: Դա հնարավորություն է օրենսդրության և հանրային հետքարքրություններին առնչվող խնդիրների շուրջ լայնամասշտաբ հանրային քննարկում իրականացնելու: Այն կարող է ծառայել նաև հասարակության պահանջներին համապատասխան լուծումներ գտնելուն միտված պառլամենտական գործունեության վերաբերյալ

Գծապատկեր 5. Ենթաօրենսդրական իրավական ակտի գնահատում և հիմնական օրենքով սահմանման չափանիշներ

Ենթաօրենսդրական իրավական ակտի լեգալության և լեգիտիմության գնահատման համար ստուգման ենթակա գործողությունների ցանկ

Հիմնական օրենքով ենթաօրենսդրական իրավական ակտի ընդունում սահմանելու չափանիշներ



հանրային իրազեկվածության աստիճանի բարձրացմանը:

ՁԼՄ-ների մասնակցության ապահովում

Պետական կառավարման և վերջիններիս գործունեությունը վերահսկող մարմինները սովորաբար հակված են ուշադրությունը կենտրոնացնել ՁԼՄ-ներով լայնամասշտաբ քննարկման արժանացած խնդիրների վրա: ՀՀ-ի շահագրգիռ անձանց հետ խորհրդատվությունը հրապարակայնացնելու համար ՀՀ-ում կարող է որոշել հրավիրել լրատվամիջոցների ներկայացուցիչներին և հրապարակել մամլո հաղորդագրություն:

Լրատվամիջոցների ներկայությունը հանրային լուսմանին կամ խորհրդատվություններին կախված է ՀՀ-ում որոշումից և խորհրդարանի կանոնակարգից: ՀՀ-ում կարող է որոշ դեպքերում հանրային լուսման կամ խորհրդատվությունների մի հատվածը փակ անցկացնելու որոշում կայացնել (օր., եթե քննարկվող նյութը կարող է ազդել ազգային անվտանգության պահպանմանը, կամ հանգեցնում է ներգրավված անձանց անձնական տվյալների գաղտնիության իրավունքի խախտմանը, և այլն): Խորհրդարանի աշխատակազմի լրատվության և հանրության հետ կապերի վարչությունը պետք է սերտորեն ներգրավված

լինի խորհրդատվության նախապատրաստական աշխատանքներին:

Ի լրումն հրավիրյալ լրատվամիջոցների, ՀՀ-ում կարող է որոշել իրականացնել լիարժեք տեղեկատվական արշավ: Լրագրողների և հեռուստաընկերությունների լսարանը քաղաքացիական հասարակությունն է, մինչդեռ՝ լիարժեք տեղեկատվական արշավը նախատեսված է հանրության, ՀՀ-երի և շահագրգիռ անձանց, կառավարության, քաղաքացիական ծառայողների և բոլոր պատգամավորների համար: Եթե Հանձնաժողովը միտում ունի ոչ միայն փորձագիտական եզրակացություն ստանալուն, այլև նպատակաուղղված է հանրության և շահագրգիռ կողմերի՝ օրենքի վերաբերյալ իրազեկվածության աստիճանը բարձրացնելուն, քննարկվող նյութը առավել լայն շրջանակների համար լուսաբանելուն, ապա լիարժեք տեղեկատվական արշավի կազմակերպումը կարող է լինել ՀՀ-ի տեղեկատվության հավաքագրման առավել արդյունավետ միջոց:

Լրատվամիջոցների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների համար հանրային լուսման փաթեթի նախապատրաստում

Նախատեսված ՀՀ-ի խորհրդատվության վերաբերյալ ՀՀ-ի կողմից

տեղեկատվության ավելի համակարգված տրամադրման համար խորհուրդ է տրվում նախապատրաստել համապատասխան փաստաթղթերով հանրային լուսմների փաթեթ: Հանրային լուսմների փաթեթը կարող է ուղղված լինել լրատվամիջոցներին, քաղաքացիական հասարակության կազմակերպություններին և քաղաքացիներին: ՀՕՎԻՄ-ի աշխատակազմը պատասխանատու է հանրային լուսմների փաթեթի կազմման համար: Անհրաժեշտ է, որ հանձնաժողովի աշխատակազմը մանրագնին ուսումնասիրի տեղեկատվության աղբյուրների բնույթը, քանի որ տարածվող տեղեկատվությունը կարող է էպետ ազդել հանրության և շահագրգիռ անձանց կողմից տրամադրվելիք վկայությունների վրա: Հանրային լուսմների փաթեթը կարող է ընդգրկել հետևյալ փաստաթղթերը.

- խորհրդատվության ընթացքի վերաբերյալ մամլո հաղորդագրությունը,
- խորհրդատվական հանդիպման օրակարգը,
- հանձնաժողովի անդամների ցուցակը,
- ներկա փորձագետների ցուցակը,
- հնարավորության դեպքում տեղեկատվություն տրամադրողների

կենսագրությունը կամ համապատասխան պրեզենտացիան,

- համապատասխան օրենքի պատճենը կամ սեղմագիրը,
- ցանկալի է, խորհրդատվության թեմայի հետ առնչություն ունեցող բազային տեղեկատվություն կամ վերլուծություն, որը կարող է նաև ներառել միջազգային փորձի վերաբերյալ հղումներ,
- խորհրդատվությանը ներառված լրատվամիջոցների մասնակցության ընթացակարգի վերաբերյալ ուղեցույց:

Խորհրդարանի ինտերնետային էջով խորհրդատվություն

Ինտերնետը, որպես հանրային լուսմների լուսաբանման միջոց օգտագործելու համար գոյություն ունեն մի քանի տարբերակներ: Ստորև թվարկվածները առավել խելամիտ տարբերակներն են.

- Խորհրդարանի ինտերնետային էջը կարող է պարունակել առաջիկա հանդիպումների վերաբերյալ մշտական հղում՝ ներառելով տեղեկատվություն խորհրդատվության առարկայի, օրվա, ժամի, տեղի, կապի միջոցների, հրավիրված

անձանց և հանդիպման նպատակի վերաբերյալ:

- Ինտերնետը նաև լավ միջոց է քննարկվող նյութով հետաքրքրված մասնավոր անձանց գրանցվելու և խորհրդատվությանը մասնակցելու համար:
- Սոցիալական ցանցերի կամ էլեկտրոնային փոստի միջոցով քաղաքացիները կարող են պարզամավորների կամ ՀՕՎԻՄ-ի նախագահի միջոցով առաջարկել վկայություն տվողներին ներկայացվող հարցեր:
- Խորհրդատվությունից հետո խորհրդարանի ինտերնետային էջում կարող է նախատեսվել հատուկ բաժին հանրության կարծիքների, մեկնաբանությունների, առաջարկությունների համար: Այս պարագայում, ինտերնետային էջում անհրաժեշտ է նշել, թե ո՞ր էլեկտրոնային փոստին ուղարկել հետագա մեկնաբանությունները, առաջարկները կամ բողոքները խորհրդատվության պրոցեսի վերաբերյալ կամ առաջարկել տրամադրել լրացուցիչ տեղեկատվություն:
- Խորհրդարանը կարող է ինտերնետային էջը օգտագործել ՀՕՎ-ի զեկույցները հրապարակելու, ինչպես նաև ընթացիկ իրավիճակի

վերաբերյալ նոր տեղեկատվություն հետևողականորեն տրամադրելու համար:

Աժ աշխատակազմի գործողությունները

Նախապատրաստել և ՀՕՎԻՄ-ի նախագահին տրամադրել հրավիրվող լրատվամիջոցների վերաբերյալ առաջարկություն: Իրականացնել լիարժեք տեղեկատվական արշավ:

Նախապատրաստել խորհրդարանի ինտերնետային էջի միջոցով խորհրդատվության իրականացման համար նախընտրելի մոտեցման և ճեպագրույցների փաթեթի պարունակության վերաբերյալ տեղեկատվություն:

Քայլ 14. ՀՕՎ-ի հետազոտության արդյունքների վերլուծություն

Հավաքագրված հետազոտության արդյունքների հիման վրա համապատասխան եզրակացություններ անելու գործընթացը ՀՕՎ-ի ամենակարևոր և բարդ էտապն է: Այն հնարավոր չէ մեխանիկորեն կամ հեշտությամբ իրականացնել: Այս պրոցեսի մարտահրավերը համակարգված այնպիսի տեղեկատվության տրամադրումն է, որպեսզի այն հնարավոր լինի օգտագործել ՀՕՎ-ի առարկա հանդիսացող խնդրին առնչվող հարցերին պատաս-

խանելու համար: ՀՕՎ-ի արդյունքները վերլուծելու համար անհրաժեշտ է ստեղծագործական մոտեցում, ինչպես նաև ապագան տեսնելու ջանքեր ցուցաբերել: Եզրակացություններ անելիս հետևողական, օբյեկտիվ մեթոդների օգտագործումը երաշխավորում է, որ այն կբավարարի հետազոտության պահանջները:

Եզրահանգման գալու համար ՀՕՎԻՄ-ի աշխատակազմը պետք է վերլուծի մարդկանց մեջ տարածված տեղեկատվությունը, որը պատասխանում է հետևյալ ընդգրկուն հարցերին.

- Ինչն է աշխատում և ինչը չի աշխատում:
- Ինչու՞:
- Ո՞վ ունի փոփոխություններ իրականացնելու պաշտոնական և ոչ պաշտոնական լիազորություններ:
- Ո՞վ և ու՞մ հետ կարող է համագործակցել փոփոխություններն իրականացնելու կամ այն կանխելու նպատակով:

Այս հարցերի պատասխաններն այլ հարցերի թվում կարող են տրամադրել տեղեկատվություն, որը կարող է օգտագործվել ուսումնասիրվող թեմայով հիմնական վերլուծություն անելու համար:

Համակարգված տեղեկատվությունն օգտակար է ՀՕՎԻՄ-ի աշխատակազմի համար այնքանով, որ հիմնվելով այդ տեղեկատվության վրա կարելի է փնտրել որոշակի օրինաչափություններ և ի հայտ եկած խնդիրների բացատրություններ, ինչպես նաև իրականացնել SWOT (առավելություններ, թերություններ, հնարավորություններ և վտանգներ) վերլուծություն: Հավաքագրված տեղեկատվությունը (ցանկալի է միաժամանակ և՛ քանակականը և՛ որակականը) կարող է արտացոլել ոչ միայն տվյալ երևույթի վերաբերյալ գոյություն ունեցող միտումները, այլև՝ տրամադրել գործընթացի վերաբերյալ բացատրություն՝ ներառելով պատճառները, թե ինչու՞ է դա առաջին հերթին իրականացվում:

ՀՕՎԻՄ-ի աշխատակազմը պետք է օգտագործի իրենց արդյունքները կողմնորոշվելու թե ի՞նչ եզրակացություններն ու առաջարկներն են առավել հրատապ և առաջնահերթ օրենքի բարելավման համար, ի՞նչ նպատակների հասնելն է առավել մարտահրավերային և կառավարման ի՞նչ մակարդակին կարելի է հասցեագրել ՀՕՎ-ի արդյունքները:

Աժ աշխատակազմի գործողությունները

- Նախապատրաստել ՀՕՎ-ի հետազոտության նախնական արդյունքները հիմնվելով տվյալների

վերլուծության համար որոշված մեթոդի, SWOT անալիզի, շահագրգիռ անձանց վերլուծությունների և իրավական զեկույցների վրա:

- Քննարկել ՀՕՎ-ի նախնական արդյունքները տարբեր մշտական հանձնաժողովների, ԱԺ աշխատակազմի իրավաբանական վարչության հետ: ԱԺ աշխատակազմը կարող է նաև ՀՕՎ-ի արդյունքները քննարկել դրսից հրավիրված փորձագետների և լիազոր մարմնի ներկայացուցիչների հետ:

Քայլ 15. Ձեկույցի նախագծի կազմում

Անհրաժեշտ է, որ յուրաքանչյուր ՀՕՎ հետազոտության արդյունքն արտացոլվի առանձին կազմված զեկույցում: Ձեկույցը պետք է ներառի հավաքագրված հիմնական տեղեկատվության, խորհրդատվություններին ներկայացված նյութերի, պատգամավորների և տեղեկատվություն տրամադրողների միջև քննարկված առանցքային կետերի, արված եզրակացությունների և բացահայտումների պատշաճ ամփոփումը:

Կարևոր է տարանջատել հետազոտության փաստացի արդյունքները, որոնք որպես այդպիսին պետք է ներկայացված լինեն զեկույցում, քննարկվող թեմաների և քաղաքականության հարցերի շուրջ առաջարկությունների

մշակման քաղաքական գործընթացից: Հետազոտության արդյունքների ամփոփումն ու հաստատումը չպետք է հետաձգվի համապատասխան առաջարկությունների վերաբերյալ ընթացող քննարկումներ պատճառով:

ՀՕՎԻՄ-ի աշխատակազմը պատասխանատու է ՀՕՎ-ի զեկույցը, ներառյալ արդյունքներն ու եզրակացությունները վերջնական տեսքի բերելու համար: ՀՕՎԻՄ-ը պետք է որոշի թե ո՞ր փաստաթուղթերը (եթե դրա կարիքը կա) ներառել նաև զեկույցում: Կցված փաստաթղթերը կարող են ընդգրկել տեղեկատվություն տրամադրողների ներկայացրած գրավոր նյութերը, հանրային լսումների նյութերը, ՀՕՎԻՄ-ի ուսումնասիրության արդյունքները, խորհրդատվությանը մասնակցելու հնարավորություն չունեցած անձանց տրամադրած գրավոր տեղեկատվությունը, ինչպես նաև հանրային լսումների սղագրությունները:

ԱԺ աշխատակազմի գործողությունները

- Վերջնական տեսքի բերել զեկույցի նախագիծը ՀՕՎ-ի հետազոտության արդյունքներով:
- Պատրաստել և Հանձնաժողովի նախագահին ներկայացնել հնարավոր առաջարկությունների նախագիծ, կամ հնարավոր առա-

ջարկությունների տարբեր տարբերակներ:

■ Քննարկել և հաստատել առաջարկությունները:

Պատգամավորների / ՀՕՎԻՄ-ի գործողություններ

■ ՀՕՎ-ի հետազոտության արդյունքների հիման վրա վերանայել և հաստատել զեկույցը:

ՀԵՏԱԳԱ ՔԱՅԼԵՐԻ ՓՈՒԼ

ՀՕՎ-ի հետազոտության փուլի ավարտին անհրաժեշտ է ուշադրություն դարձնել տրամաբանորեն հաջորդող որոշակի խնդիրների վրա: Այս խնդիրները հիմք են հանդիսանում ՀՕՎ-ի հետազոտության հետագա գործողությունների փուլի համար:

- զեկույցի տարածում և լայն հանրության համար մատչելիության ապահովում,
- հետազոտության հիման վրա հետագա քաղաքականության իրականացում,
- ՀՕՎ-ի արդյունքների և գործընթացի գնահատում:

Քայլ 16. Ձեկույցի տարածում և հանրային մատչելիության ապահովում

ՀՕՎ-ի հետազոտության զեկույցը պետք հրապարակվի և լինի հան-

րության համար մատչելի: Ձեկույցի՝ Խորհրդարանի ինտերնետային էջում տեղադրելը, հրապարակայնացնելու առաջին տարբերակներից մեկն է: Հանձնաժողովը կարող է որոշել տարածելու համար հրապարակել նաև զեկույցի թղթային տարբերակը: Հատուկ դեպքերում ՀՕՎԻՄ-ը կարող է մամուլի ասուլիս հրավիրել զեկույցը ներկայացնելու և հանրության ուշադրությունը ստացված արդյունքների վրա հրավիրելու համար: Այս դեպքերում Հանձնաժողովը մամուլի ասուլիսից առաջ պետք է քննարկի ՀՕՎ-ի հետագա քայլերը:

Եթե ՀՕՎԻՄ-ը ցանկանում է զեկույցի հետ միաժամանակ հրապարակել գրավոր տեղեկատվության որոշ մասը, բայց տեղեկատվություն տրամադրողը ցանկանում է այն հրապարակել նախապես, ապա վերջինս պետք է նախապես տեղեկացնի ՀՕՎԻՄ-ին և ստանա թույլտվություն:

Խորհուրդ է տրվում հանրային լսումների կամ խորհրդատվության զեկույցի պատճենը ուղարկել վկայություն տվողներին և մասնակից բոլոր անձանց:

Ի լրումն, աշխատակազմը կարող է զեկույցի պատճենն ուղարկել նախարարներին, բոլոր շահագրգիռ կողմերին և հետաքրքրված խմբերին, քաղաքացիական հասարակության կազմակերպություններին և ՀԿ-երին, տվյալ ոլորտով մասնագիտացած լրագրողներին, միջազգային կազմակերպություններին և այլ ինստիտուտներին, որոնք հնարավոր է հետաքրքրված լինեն ՀՕՎ-ի ենթարկված թեմայով: Ձեկույցի լայն տարածումը կարող է նպաստել հանրային իրազեկման արշավին և բարձրացնել Խորհրդարանի ՀՕՎ-ին ներգրավվածության աստիճանը:

ՀՕՎԻՄ-ի անդամները պետք է համագործակցեն ԱԺ աշխատակազմի լրատվության և հանրության հետ կապերի վարչության հետ զեկույցի օրինակը ստացողների ցանկը կազ-

մելու համար և օգտվելով խորհրդարանի առաքման ծառայությունից՝ զեկույցի թղթային տարբերակը հասցեատերերին ուղարկելու համար: Ի լրումն, խորհրդարանի աշխատակազմը պետք է կազմի հետազոտության ամփոփ սեղմագիրը արդյունքներով հանդերձ և ուղարկի լրատվության միջոցներին, պարբերաբար թարմացնի ՀՕՎ-ի վերաբերյալ խորհրդարանի ինտերնետային էջի տեղեկատվությունը:

ԱԺ աշխատակազմի գործողությունները

- Պատրաստել ՀՕՎ-ի հանրային իրազեկման վերաբերյալ առաջարկություն և քննարկել այն խորհրդարանի աշխատակազմի Լրատվության և հանրության հետ կապերի վարչության հետ:
- Տրամադրել ՀՕՎ-ի զեկույցը բոլոր այն անձանց և կազմակերպություններին, որոնք նպաստել են ՀՕՎ-ի հետազոտության անցկացմանը:

Հետագա գործողությունների սխեմա

Ջրապարակայնացնել և դանձնել զեկույցը հանրության համար հասանելի

Իրականացնել զեկույցից բխող քաղաքականություն

Գնահատել ՀՕՎ-ի արդյունքներն ու գործընթացը

Քայլ 17: ՀՕՎ-ի հետազոտության արդյունքների հիման վրա հետագա քաղաքականության իրականացումը

- ՀՕՎ-ի հետազոտության զեկույցի ընդունումն ու տարածումը դեռևս գործընթացի ավարտը չէ: Փաստացի ՀՕՎ-ի հետազոտության նկատմամբ եղած հետագա ուշադրությամբ կարելի է տարբերակել, թե ինչ ճակատագրի է արժանանում առաջարկվող հանրային ներդրումները և արդյո՞ք դա կնպաստի ծառայությունների մատուցման որակի և ընդհանուր առմամբ տվյալ օրենքի բարելավմանը, որն եղել է իրականացված ՀՕՎ-ի զննության առարկա:
- Չնայած ակնկալիքներն ու հետաքրքրությունը հնարավոր է նվազի ՀՕՎ-ի հետազոտության ավարտից հետո, էական է՝ հետհետազոտական մոնիտորինգային մեխանիզմների ներդրումը: Ստորև ներկայացված են աշխատակազմի և ՀՕՎԻՄ-ի նախագահի հետագա հնարավոր գործողությունները:
- ՀՕՎ-ի հետազոտության ավարտից հետո խորհուրդ է տրվում, որ ՀՕՎԻՄ-ը դիմի Կառավարությանը զեկույցի և առաջարկությունների վերաբերյալ կարծիք հայտնելու համար:

- Խորհրդարանի լիազումար նիստերի ժամանակ, Հանձնաժողովի անդամները և նախագահը կարող են օգտագործել հետազոտության արդյունքները հարցումների և համապատասխան վերլուծության համար:
- Հետագայում կարող է առաջարկվել լիազումար նիստի ժամանակ իրականացնել զեկույցի վերաբերյալ բանավեճի կազմակերպում:
- Ձեկույցը կարող է դիտարկվել նաև որպես շարժառիթ, որպեսզի արտահայտվի խորհրդարանի վերաբերմունքը, համաձայնությունը կամ անհամաձայնությունը զեկույցի մի հատվածի, որոշակի պարագրաֆների, ներկայացված առաջարկությունների կամ ամբողջական զեկույցի վերաբերյալ:

ԱԺ աշխատակազմի գործողությունը

- Պատրաստել և ՀՕՎԻՄ-ին ներկայացնել առաջարկություններ հետագա քաղաքականության և հետազոտության իրականացման վերաբերյալ:

Պատգամավորների գործողություններ

- Դիմել Կառավարությանը զեկույցի վերաբերյալ եզրակացության և կարծիքի համար:
- Խորհրդարանական բանավեճերի ժամանակ հղում անել զեկույցին և զեկույցի արդյունքներին: Կարող են իրենց խորհրդարանական ելույթները կառուցել ելնելով զեկույցի արդյունքներից:

Քայլ 18. ՀՕՎ-ի հետազոտության արդյունքների և գործընթացի գնահատում

ՀՕՎ-ի հետազոտության ավարտից որոշ ժամանակ անց անհրաժեշտ է, որ ՀՕՎԻՄ-ը գնահատի հետազոտման արդյունքները և գործընթացը: Խորհուրդ է տրվում գնահատումն իրականացնել 9-12 ամիս անց: Այս պարագայում ՀՕՎԻՄ-ը հնարավորություն կունենա գնահատել նաև հետազոտությամբ ներկայացված առաջարկությունների ընդունման արդյունքում արձանագրված առաջընթացի վերա-

բերյալ, խորհրդակցել առաջարկությունների առավել արդյունավետ իրականացման նպատակով հետագա խորհրդատվության տրամադրման, ինչպես նաև օրենսդրության նոր առաջարկություններ և փոփոխություններ ներկայացնելու հարցերի շուրջ:

Գնահատումը կարող է նաև անդրադառնալ ՀՕՎ-ի գործընթացին, ինչպես, օրինակ, գնահատելով ժամանակացույցի, ներգրավված մարդկային և ֆինանսական ռեսուրսների, շահագրգիռ անձանց հետ փոխհարաբերությունների արդյունավետությունը: Գնահատման ժամանակ կարող է դիտարկվել նաև խորհրդարանի կողմից հետագա օրենսդրության ՀՕՎ-ի իրականացման համար կիրառելի իրավական և ընթացակարգային մեխանիզմները:

ԱԺ աշխատակազմի գործողությունը

- Նախապատրաստել ԱԺ մշտական հանձնաժողովում ՀՕՎ-ի արդյունքների և գործընթացի գնահատման նախագիծ:

ՀՕՎ-ի ՄԻՋՈՑՈՎ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԴԵՐԻ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ

Օրենսդրության կիրառման վերանայումը խորհրդարանի պարտականություններից է, որը սերտորեն առնչվում է վերահսկողական գործառնության հետ: Հաշվի առնելով վերը նշվածը՝ խորհրդարանը կարող է ստեղծել հատուկ ուղղվածության հանձնաժողովներ և սեփական նախաձեռնությամբ իրականացնել վերլուծություններ և/կամ կարող են ապավինել կառավարության կողմից տրամադրված տեղեկատվությանը և զեկույցի արդյունքներին: Խորհրդարանը և կառավարությունն ունեն հստակ դերեր և նպաստում են օրենքների կիրառման գնահատման գործընթացի տարբեր էտապներին: Կառավարությունը, լինելով օրենքի կիրառման հիմնական պատասխանատուն, տարբեր միջոցներով կարող է հավաքագրել տեղեկատվություն օրենքների կիրառման ընթացքի վերաբերյալ: Մյուս կողմից խորհրդարանը պատասխանատու է վերահսկելու կառավարության աշխատանքը:

Սույն ուղեցույցով ռաջարկվում է ՀՕՎ-ի իրականացման զանազան

տարբերակներ (կամ տարբերակների համախումբ)։

- Կարող է որոշվել, որ նախարարությունները պարբերաբար տրամադրեն տեղեկատվություն օրենքների կիրառման վերաբերյալ, համաձայն որի նախարարությունները օրենքի ուժի մեջ մտնելուց 3-5 տարի հետո պատրաստում են հուշագիր իրենց ոլորտին առնչվող յուրաքանչյուր օրենքի կիրառման վերաբերյալ:
- Խորհրդարանը կարող է պատվիրել դրսից որևէ կազմակերպությանը (Օր. աուդիտորական կազմակերպություն, հասարակական կազմակերպություններ կամ որևէ անկախ հիմնարկություն, ինչպես օրինակ ԲՈՒՀ-եր, ՀԿ-եր) իրականացնել օրենքի կիրառման վերաբերյալ խորքային հետազոտություն:
- Խորհրդարանը կարող է հետազոտել որոշակի ընտրված օրենքների կիրառումը և կազմակերպել դրա

վերաբերյալ ուսումնասիրություն՝ հրավիրելով հանրային լսումներ, հավաքագրելով ապացույցներ, խորհրդարանի աշխատակազմով իրականացնել ներքին հետազոտություն ԱԺ աշխատակազմի Իրավական փորձաքննության, Տեղեկատվական և վերլուծության վարչությունների և Իրավական սպասարկման բաժնի հետ համատեղ:

Առավել ակնհայտ և գործնականում ՀՕՎ-ի աշխատանքների կազմակերպման և զարգացման ժամանակ ի հայտ եկող հետևյալ խնդիրների առաջ կարող է կանգնել խորհրդարանը.

- Ինչ ձևով պետք է իրականացվի:
- Ինչ առաջնահերթություններ պետք է ունենա:
- Երբ պետք է այն օգտագործվի:

Այս հարցերին պատասխանելու համար խորհրդարանը կարող է հաշվի առնել այլ խորհրդարանների փորձը: Այս ուսումնասիրությունը կարող է հանգեցնել որոշակի ad-hoc առաջադրանքի ձևավորմանը ժամանակավոր, հատուկ կամ գոյություն ունեցող մշտական հանձնաժողովին: Հաշվի առնելով օրենսդրական աջակցության լրացուցիչ օղակների ստեղծման կարևորությունը՝ կարող է նաև որոշվել ՀՕՎ-ի հետազոտության նոր շերտ ավելացնելու

հնարավորության վերաբերյալ՝ հիմք ստեղծելով ուժը կորցրած օրենքների կամ ուժը կորցրած դրույթներ պարունակող օրենքների պարտադիր գնահատման, ՀՕՎ-ի ենթարկելու անհրաժեշտությունը՝ սահմանելով օրենքների առանցքային կետերը, որոնք ենթակա են պարտադիր ուսումնասիրության:

Խորհրդարանի՝ սահմանափակ ռեսուրսների տիրապետելու պարագայում, խորհուրդ է տրվում ցուցաբերել հետևյալ մոտեցումը. պլանավորել և իրականացնել երկամյա փորձական ծրագիր, որով Խորհրդարանը կիրականացնի սահմանափակ թվով օրենքների (2-3) ուսումնասիրություն: Ցանկալի է, որ երկու տարի անց գնահատվեն ծրագրի արդյունավետությունը, ուսումնասիրության արդյունքների հիման վրա արվեն եզրակացություններ, մատնանշվեն ծրագրից քաղված դասերը ՀՕՎ-ի հետազոտությանը հետագա ավելի ընդգրկուն, ընդլայնված և ավելի ինտիտուցիոնալ մոտեցում ցուցաբերելու համար: Փորձնական ծրագիրը կարող է իրականացվել հետևյալ ձևաչափով. Հանձնաժողովի կողմից նախարարությունների որոշակի օրենքների իրականացման վերաբերյալ հաշվետվությունների ուսումնասիրություն, կամ Հանձնաժողովի կողմից արտաքին աղբյուրներից որոշակի օրենքների կիրառման վերաբերյալ իրականացրած հետազոտությունների զննում, գնահատում և այլն:

Վերջապես, անհրաժեշտ է, որ ՀՕՎ-ի հետազոտությունը արդիական լինի հանրության համար և իրականացվի այնպես, որ այն նպաստի քաղաքացիների կողմից օրենսդրության գնահատմանն աջակցելուն:

Սույն ուղեցույցի նպատակն է աջակցել
Հայաստանի Հանրապետության Ազգային
ժողովի վերահսկողական գործառույթի
արդյունավետ իրականացմանը՝
պատգամավորներին հետօրենսդրական
վերահսկողության հիմնական փուլերին և
վերահսկողական աշխատանքների
արդյունավետ կազմակերպմանը
ծանոթացնելու միջոցով:

Սույն ուղեցույցը կազմվել է «ՀՀ Ազգային
ժողովի՝ քաղաքական բանավեճեր վարելու և
ռազմավարական հաղորդակցություն
ապահովելու կարողությունների հզորացում»
ծրագրի շրջանակներում:

Ծրագիրն իրականացվում է «Մարդկային
զարգացման միջազգային կենտրոն»
հասարակական կազմակերպության կողմից:



British Embassy
Yerevan

**Ծրագիրն իրականացվում է Մեծ
Բրիտանիայի Արտաքին գործերի և
համագործակցության գրասենյակի
ֆինանսական օժանդակությամբ**